

ՔԱՆԱԲԵՐ

Հոգեւոր Աստվծերի Աստուծի ՀԱՄԱՐ
 «PANPÈRE» REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France

7, Rue Papère, MARSEILLE

(ժ. Տարի) ՓԵՏՐՈՒՍՐ 1934

(10^{me} Année) Février 1934

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Հնազանդութիւն

Վ. Ս.

Հոգ. կեանք

Մթութեան մէջ պարտեզ մը

Թարգ. Ն. Մ.

Հոգեկան տիտեր

Ա. Օ. Փափազեան

Նայէ Փրկչին

Վեր. Մ. Տէր Սահակեան

«Սուրբեր ըլլալու կանչումներուն»

Վ. Սահակեան

Կեսաց ամուսններէն

«Պիտի ըլլայ լալ ու ակումներ կրճատել»

«Աստուծոյ խօսքը կենդանի է»

«Խաղաղութիւն... խաչին... արիւնովը»

«Հաւատքը որ սիրով է գործ կը գործի»

Սերտողութիւն

Հրանդ Յ. Ապաճեան

«Մեղաւոր»ին տեղ

Ս. Գրական ուսումնասիրութիւն

Թարգ. Զ. Բ. Պուտաքեպն

Հրեշտակները

Կենսագրական

X X X

Ատուֆ Մօնօ

Ծանկանց սիւնակ

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխաղախ վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամենուն, ուստի Յշմարտութեան ճանձին ներկայացուցիքն ալ չճանցնար ոեւէ յարանուանութիւն մը, հապա մէկ է անոնց չհետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ կը տպուին Մարսէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կ'ընայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա. նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:

XXXXXXXXXXXX

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 18 Ֆրանք
 Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
 Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԿԵՐԷՆ** միասին Ֆրանսա եւ Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ ղրամական առաքումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
 7, Rue Papère
 MARSEILLE (France)

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postal Է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արմենի'ր դուն
որ կը քնանաս, /ն.
կանգնէ մեռելն.
բէն, ու. Բրիտանոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Խ. 14

Քանզի ալ աս.
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու. պի-
տի չուշանայ:

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր ցանգիւտը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

Ժ. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1954

ԹԻԻ 2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՆԱԶԱՆ ԴՈՒԹԻՒՆ

Աստուած բացարձակ Տէրն է տիեզերքին. Անոր արդար իրաւունքն է բացարձակ հնազանդութիւն ակնկալել Իր արարածներուն իւրաքանչիւրէն, վասնզի ամէն բաները Անկէ ու Անով ու Անոր համար են» (Հռով. ԺԱ. 36): Սատանան մեր նախամայրը խաբեց անհնազանդ գտնուիլ Սիրոյ Աստուծոյն պատուէրին: Այդ օրէն ի վեր վաթսուէն դարեր անցեր են եւ անհնազանդութիւնը փոխուած է ապստամբութեան: Ուրիշ բան է մէկու մը հրամանին անհնազանդ ըլլալ, եւ ուրիշ բան է այդ հրամանին անհնազանդ ըլլալէ զատ նաեւ հակառակ հրաման մը ընդունիլ եւ Աստուծոյ հակառակիլ: Սատանան այդ հակառակորդն է ու նաեւ ապստամբութեան զրդողը (Եփես. Բ. 2):

Ըստ Մովսէսի օրէնքին, իր ծնողաց անհրաժեշտ եղող տղան քարկոծուելով կը մեռնէր (Բ. Օրին. ԻԱ. 18-21): նաեւ Առակ. Լ. 17):

Բ. Օրին. ԻԲ. 15-68ի մարգարէացուած անէծքներուն պատճառը այն խօսքին մէջ է, «Եթէ քու Տէր Աստուծոյդ խօսքին Հնազանդիս» (Հ. 15), տես. նաեւ Հռով. Ժ. 21, Երբ. Բ. 2) եւ ասոր հակառակ՝ Բ. Օրին. Լ. 1-10ի մարգարէացուած օրհնութեանց պատճառն ալ հետեւեալ խօսքին մէջ է, «Եւ դուն քու Տէր Աստուծոյդ դառնաս, եւ բոլոր սրտովդ ու բոլոր հոգւովդ Անոր խօսքին հնազանդիս» (Հ. 2):

Դերութեան ժամանակի մարգարէները Իսրայէլի գերութեան տարուելուն պատճառը անոր անհնազանդութեան մէջ կը գտնեն (Երեմ. Է. 22-26, ԺԱ. 4-10, Դան. Թ. 11 եւն.):

Հնազանդութիւնը բանալին է որ մեզի Աստուծոյ իմաստութեան ու գիտութեան բոլոր գանձերը, փրկութեան, յաւիտենական կեանքի եւ

ամէն օրհնութեանց դուռը կը բանայ: Հնազանդութիւնով կրնանք բանալ Աստուծոյ սիրտը ու վաշխել Անոր սիրտին առատութիւնը: Ասոր հակառակ՝ անհնազանդութիւնը կ'ստիպէ զԱստուած Իր երեսը ծածկել մեզմէ, ու Իր ականջները զոցել որպէսզի մեր ազօթքները չլսէ: Այո՛, անհնազանդութիւնը զԱստուած մեզի թշնամի կ'ընէ: Ա. Թագ. ԻԲ. 6, 15, 16ի մէջ նկարագրուած Աստուծոյ լուրջեան ու վերջապէս Սաւուդի կործանման պատճառը՝ անոր անհնազանդութիւնն էր, ու նոյնիսկ միայն կէս անհնազանդութիւն մը: Սաւուդ փափաքած էր նզովուածներուն աւմէնէն աղէկները Տէրոջը զոհ ընել. բայց, «Միթէ Տէրոջը առջեւ ողջակէզները ու զոհերը Տէրոջը ձայնին հնազանդութիւն ընելու չափ հաճո՞յ են, ահա հնազանդութիւնը զոհէն, ու խօսք մտիկ ընելը խոյերու ճարպէն աղէկ է, քանզի ապստամբութիւնը կախարդութեան մեղքին պէս» ու կամակորութիւնը կռապաշտութեան պէս է» (Ա. Թագ. ԺԵ. 21-23): Անհնազանդութիւնը ուրեմն՝ կը տանի ապստամբութեան ու կամակորութեան: Վերջին օրերու չար ժամանակներուն համար Առաքեալին տուած նկարագրութեան մէջ տես ի՞նչ զլխաւոր տեղ կը բռնէ անհնազանդութիւնը իր զանազան ձեւերուն տակ — ամբարտաւան, հպարտ... ծնողներու անհրաժեշտ, ապերախտ... բարին չսիրող... դաժանաբարոյ, յանդուգն, գոռոզ եւն» (Բ. Տիմ. Գ. 1-5): Քսաներորդ դարու մարդիկ ընկերվարութեան պատրուակաւ ապստամբութեան ոգին յառաջ կը տանին: Միայն կեղեքուած բանուորին կեղեքող հարուստին դէմ բողոքելու մղող այս դրութիւնը (որ ինքնին շատ իրաւացի է,) զործիք դարձած է Սատանային ձեռքին մէջ՝ մարդը ապստամբ

բեցնելու՝ իշխանութեանց դէմ, իր ծնողաց դէմ, իր եկեղեցիին եւ իր Աստուծոյն դէմ: Անգլիոյ վարչապետ Մալտոնալտի աղջիկը (ընկերվարական), պսակի արարողութեան ընթացքին, պատուելին՝ «Կը խոստանամ ամուսնոյդ հնազանդիլ» հարցման «Ո՛չ» պատասխանեց:

••

Բայց հնազանդութիւնը իր բարձրագոյն աստիճանին ու արժէքին կը հասնի Յիսուս Քրիստոսի մօտ, եւ այն ալ Յիսուս Քրիստոսի մեղաւորներու համար կատարած փրկագործութեան մէջ: Հնազանդութիւնը միջոց մըն էր որով Յիսուս Քրիստոսի գերազանցութիւնը երևան եկաւ: Առաքեալը Հռով. Ե. գլխուն մէջ Աղամի մեղքը եւ անոր անաւոր հետեւանքները՝ Յիսուսի արդարութեան եւ անոր յաւիտենական օրհնեալ հետեւանքներուն հետ բաղդատելու ատեն կ'ըսէ, «Վասնզի ինչպէս մէկ մարդուն անհնազանդութիւնովը շատերը մեղաւոր եղան, այնպէս մէկուն հնազանդութիւնովը շատերը արդար պիտի ըլլան» (Հռով. Ե. 19):

Խաչին տուած յաւիտենականութեան պատմութեան մէջ աննման եւ անզուգական է: Խաչը հրեշտակներուն զմայլանքը, Սատանային խայտառակումն, Հօրը սիրոյն յայտնութիւնը եւ Որդւոյն հնազանդութիւնն է:

Որդիութիւնը անհրաժեշտօրէն հնազանդութիւն կը պարտադրէ: Որդի եւ հնազանդութիւն իրարու բացայայտիչ բացայայտեալ բառեր են: «Եւ որովհետեւ դուք սրբիներ էք, Աստուած Իր Որդւոյն հոգին ձեր սիրտերուն մէջ զրկեց, որ կ'աղագակէ Արքա Հայր» (Գաղ. Դ. 6): Որդիի մը ամենօրեայ սորվելիք ամենէն կարեւոր դասն է հնազանդութիւն: Յիսուս Որդի եղաւ եւ իր կատարեալ Որդի՝ նաեւ կատարեալ հնազանդ եղաւ — մինչեւ մահուան հնազանդ եղաւ, ու այն ալ խաչին մահուանը (Փիլ. Բ. 8): «Որդին որ յաւիտեան կատարեալ է» Երբ. Է. 28: Յիսուսի հնազանդութեան վեհութիւնը կը կայանայ մասնաւորապէս Անոր Աստուծոյ հաւասար ըլլալով մէկտեղ՝ հնազանդելուն մէջ: Որդին թէպէտ Որդի է, եւ յաւիտեան կատարեալ, որ Աստուծոյ էութեան բուն պատկերն է եւ Անոր փառաց լոյսը, Որդին թէպէտ Աստուած է, բայց ԻՐ ԶԱՐԶԱՐԱՆԵՐԸ ԶՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՈՐՎԵՑԱՒ:

Յիսուս Քրիստոսի խաչով մեռնիլը թէեւ յաւիտենական դարերէն առաջ Աստուծոյ ծրագրին մէջ էր, բայց (Օրէնքին փրկելու անկարողու-

թիւնը փաստուելէն յետոյ) Որդին աշխարհ մը անելու պահուն՝ Անոր հնազանդութեան մասնաւոր քայլ մը առնելը հարկ կը սեպուի: «Զոհ ու ընծայ չուզեցիր Դուն (օրէնքին հերքումը) հապա Ինծի մարմին մը պատրաստեցիր» Երբ. Ժ. 3-9: Որդւոյն այս հնազանդութիւնը անպայմանօրէն խաչին հնազանդութիւնն է: «Այն ատեն ըսի, Ահա կուգամ ես... քու կամքը ընելու, ով Աստուած... որ կամքով մենք ալ սրբուցանք» Յիսուս Քրիստոսի մարմնին մէկ անգամ պատարագուելովը, Երբ. Ժ. 7, 10: «Աստուծոյ հաւասար — մինչեւ մահուան հնազանդ եղաւ, ու այն ալ խաչին մահուանը» Փիլ. Բ. 6-8, տես նաեւ Եսայ. Ծ. 3, 6, Երբ. Ե. 8, Հռով. Ե. 19 եւն:

Այսպէս՝ Յիսուս Քրիստոսի խաչին մահուան հնազանդ ըլլալը ծրագրուած էր Սուրբ Երրորդութեան կողմէ յաւիտենական դարեր առաջ: Խ. Սաղմոսէն մէջբերուած Երբ. Ժ. 3-10ի հատուածը՝ յաւիտենական դարերէն առաջ Հօր, Որդւոյն եւ Սուրբ Հոգւոյն միջև սեպի ունեցած խորհրդակցութեան մը ու որոշման մը արձանագրութիւնը ըլլալ կը թուի: «Գիրքի տոմսի մէջ Ինծի համար գրուած է»: Սուրբ Գիրքին մէջ յստակ է սա ճշմարտութիւնը թէ Յիսուս Քրիստոսի խաչով մեռնելուն մէջ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի գործակցութիւն ունէին:

Ա. Հայրը. — «Տէրը հաճեցաւ որ զԱնիկա ծեծելով ցաւերու մատնէ» Եսայ. ԾԳ. 10, նաեւ Սաղ. Կթ. 26: «Աստուծոյ շնորհքովը ամենուն համար մահ ճաշակէ Երբ. Բ. 9: «Հայրը կը սիրէ Որդին» Յովհ. Գ. 33: (Խաչին վրայ) Հայրը կը թողու Որդին Մատթ. Իէ. 46: Հայրը մեղք կ'ընէ Որդին, Բ. Կոր. Ե. 21ի լուսանցքը: Հայրը անէծք կ'ընէ Որդին, Բ. Օրին. ԻԱ. 23, Գաղ. Գ. 13:

Բ. Սուրբ Հոգին. — «Յաւիտենական Հոգիին ձեռքով Իր անձը անարատ պատարագ մատուց Աստուծոյ» Երբ. Թ. 14:

Գ. Որդին. — «Ես Իմ կեանքս կը զնեմ... մէկը չհաներ զանիկա Ինծմէ, հապա Ես կը զնեմ զանիկա Ինքիրմէս» Յովհ. Ժ. 18, նաեւ Երբ. Ե. 8:

Յիսուս Քրիստոսի խաչով մեռնելու հնազանդ ըլլալը միայն ու միայն մեր փրկութեան համար էր: Այս կէտին վրայ եթէ Սուրբ Գիրքէն մէջբերուեմք հարկ ըլլան՝ պարտինք մէկ խօսքով ամբողջ Աստուածաշունչ Գիրքը վկայ բերել, վաղնիկ անոր առաջին էջէն մինչեւ վերջին էջին մէջ օրինակներով, շուքերով կամ իրական պատկերներով, առականերով կամ մեկնութիւններով զայս կը գտնենք. այսինքն Աստուծոյ Միածին Որդւոյն, օրհնեալ Որդւոյն, յաւիտեան կատար-

եալ Որդւոյն խաչով մահուամբը մեղաւոր մարդուն փրկութիւնը: «Ու երբ կատարուեցաւ, բոլոր իրեն հնազանդողներուն յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ» Եբր. Ե. 9:

Աստուած հնազանդութիւնը վարձատրող Աստուած է: Խաչին օրինակներէն մին եղող Ծննդ. ԻԲ. գլխուն մէջ Աբրահամի հնազանդութենէն անմիջապէս յետոյ Աստուած (մարդկօրէն կ'ըսեմ) կարծես զգացուած հնազանդութեան աշուպի կատարեալ քայլի մը առջեւ՝ Աբրահամի կ'ըսէ, «Իմ անձիս վրայ երդում ըրի կ'ըսէ՝ Տէրը, որովհետեւ այս բանը ըրիր... քեզ օրհնելով պիտի օրհնեմ...» Ծննդ. ԻԲ. 15-18: Մօտ 800 տարիներ յետոյ Աստուած Դաւիթի բերնով Քրիստոսի մահուան հնազանդութիւնը մարգարէանալէ յետոյ՝ կը խոստանայ նաեւ սրանչելի վարձատրութիւնը ՃԺ Սաղմոսին մէջ, «Տէրը իմ Տէրոջս ըսաւ, նստէ իմ աջ կողմս... Տէրը երդում ըրաւ ու պիտի չզղջայ» Սաղ. ՃԺ. 1, 4, տես նաեւ Եսա. Թ. 6, 33: Փիլ Բ. 6-11ի մէջ Առաքեալը Աստուծոյ արդար վարձատրութեան ներշնչեալ գրիչն է՝ երբ Որդւոյն Աստուծոյ հաւասար աստիճանէն կամաւ ունայնանալը, խոնարհիլը ու մինչեւ խաչին մահուան հնազանդ ըլլալը նկարագրելէ յետոյ Աստուածային զմայլանքով կը գոչէ, «Աստիճանաբար Աստուած ալ զԱնիկա խիստ բարձրացուց»:

Հնազանդութեան արժէքը շատ բարձր է մահաւանդ հաւատքի մէջ: Հնազանդութիւնը հաւատքին զործնական փաստն է: Սուրբ Գրոց լեզուն գործածելու համար քսենք, — առանց հնազանդութեան եզող հաւատքը դեւերու հաւատք է (Յակ. Բ. 19), մինչդեռ յաւիտենական կեանք տուող հաւատքը հնազանդող հաւատքն է: Կարգաւ Ելից ԻԴ. 5-8, Մովսէս Տէրոջը բոլոր խօսքերը ժողովուրդին պատմեց՝ ու երբ անոնք ըսին, «Տէրոջը բոլոր ըսածը պիտի ընենք ու Անոր պիտի հնազանդինք», այն ատեն Մովսէս ուխտին արիւնը «առնելով շուրջով ու կարմիր բուրդով եւ զապալով բուն գիրքին եւ բոլոր ժողովուրդին վրայ սրկեց» (Եբր. Թ. 19): Հիմա բազմապէս զայս Ա. Յովհ. Ա. 7ին հետ, «Եթէ լոյսի մէջ քալենք, ինչպէս Անիկա լոյսի մէջ է, իրարու հետ (Աստուած եւ ես) հաղորդութիւն կ'ունենանք, ու Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ աւելն մեզքէ կը սրբէ»: Ասիկա կը նշանակէ որ եթէ լոյսի մէջ չքալենք, (հնազանդութեան կեանքը չապրինք), Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի

արիւնը մեզ ամէն մեզքէ չսրբէր: Այս է պատճառը թէ ինչու շատեր յաճախ կ'ապաշխարեն բայց երբեք չեն փրկուիր իրենց մեղքերէն, վաւերի անոնք կը մերժեն լոյսի մէջ քալել, հնազանդութեան կեանքը ապրիլ, եւ ուստի Յիսուս Քրիստոսի արիւնը անոնց վրայ չսրկուիր: «Ընտրուած... հնազանդութեան եւ Յիսուս Քրիստոսի արիւնին սրսկուելուն համար» Ա. Պետ. 1. 1:

«Հաւատքով, երբ Աբրամ կանչուեցաւ, մտիկ ըրաւ, (հնազանդեցաւ)» Եբր. ԺԱ. 8: «Երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին, որովհետեւ իմ ձայնիս ահանջ դրիր (հնազանդեցար): Ինչպէս Աստուած Իսահակի՝ (Ծննդ. ԻԶ. 1-5), Եսայի մարգարէն Իսրայէլի ազգին՝ (Եսա. ԾԱ. 1, 2), ու Պօղոս Առաքեալ Հռովմայեցոց՝ (Հռով. Դ. 16, 17), կ'ըսէ, — Աբրահամ մեր հաւատքի հայրն է, ու մեր հաւատքի հօրմէն մեր սորվելիք ամենէն մեծ դասն է հնազանդութիւնը:

Բայց մահաւանդ մեր Փրկչէն, մեր հաւատքին Առաջնորդէն ու կատարողէն հնազանդութեան դասը սորվելու ենք: Այս դասը մեզի համար փրկութեան կամ կորստեան, յաւիտենական կեանքի կամ յաւիտենական մահուան խրոչի է: «Բոլոր իրեն հնազանդողներուն յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ» Եբր. Ե. 9: «Ան որ Որդւոյն չհնազանդիր, անիկա կեանք պիտի չտեսնէ, հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ» Յովհ. Գ. 36: Վ. Ս.

«ՍՈՐՎԵՑՈՒՐ ԻՆԾԻ ՈՐ ՔՈՒ ԿԱՄՔԻ ԸՆԵՄ»

(ՍԱՂ. ԺԽԳ. 10)

Թէօտօր Մօնօյի հետեւեալ խօսքերը ոչինչ կորանցուցած են իրենց այժմէականութենէն:

«Հարցուցէք վերը արեւին. — Ի՞նչ կ'ընես: Նա պիտի պատասխանէ, «Աստուծոյ կամքը»: Հարցուցէք զայս՝ ովկէանոսի ալիքներուն՝ եւ անոնք ալ ձեզի նոյն պատասխանը պիտի տան, — «Աստուծոյ կամքը»:

Հարցուցէք զայս ցօղի կաթիլով մը իր ծառաւ անցնող սա պզտիկ ծաղիկին, նա եւս պիտի պատասխանէ, «Աստուծոյ կամքը»:

Բայց երբ հարցնէք մարդուն՝ որ ինքզինքը ստեղծուածներուն իշխանը կը կոչէ, «Ի՞նչ կ'ընես», անիկա չի՞ պատասխաներ, «Ես ինծի հաճելի եղածը, իմ ուզածս կ'ընեմ, եւ այսպէսով Աստուծոյ ինծի տուած ազատութիւնս կը հաստատեմ, իբր թէ Ան զոյուլութիւն չունենար:

ՀԱՊ. ԿԵԱՆՔ

ՄԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՊԱՐՏԷՋ ՄԸ

(J. H. Jowett)

«Ամէն բան առած եմ ու առատօրէն ունիմ»

(ՓԻԼ. Դ. 18)

Պարտիզպանութեան շուրջ գրուած գիրք մը ունիմ որուն գլուխներէն մին հետեւեալ խիստ ուշագրաւ վերնագիրը կը կրէ, «Մթութեան մէջ աճող ծաղիկներ»: Կը խօսի պարտէզին այն մասերուն վրայ, ուր արեւին ճառագայթները բոլորովին անկարող են թափանցել եւ կը նկարագրէ այն մռայլ անկիւնները որ երբեք չեն ժլպտիր արեգակին համբոյրին տակ: Դիրքս կը թըւէ կարգ մը ծաղիկներ որոնք չէ թէ միայն չեն վախճար այս մութ անկիւններէն, այլ զանոնք նոյնիսկ կը սիրեն ու անոնց մէջ կը ծաղկին: Կան տունկեր որ երեւութապէս ձախորդ պարագաներու տակ կ'աճին: Ուր որ սրիշ բոյսեր պիտի տուժէին ջերմութեան եւ պայծառութեան պակասէն՝ ասոնք սնունդ եւ կեանք կ'ստանան դժնդակ պարագաներէ: Հրապուրիչ է դիտել մթութիւնը նախընտրող ծաղիկներուն աճումը: Անոնք իրենց գեղեցիկ գլուխները չեն բարձրացնէր առ միջօրէակաւ արեգակը, այլ շուքի գաւակներ են եւ կը գրաւուին վերջալոյսէն ու խաւարէն:

Հոգեկան աշխարհին մէջ ալ նաանօրինակ երեւոյթներ կը տեսնուին, որոնք կը յայտնուին զառն ու դժնդակ պարագաներու տակ — մութի մէջ կ'աճին: Եթէ ոչ ինչպէս պիտի կրնանք բացատրել Պօղոս Առաքեալի կարգ մը փորձառութիւնները: Զայն կը գտնենք Հռովմի մէջ շղթայուած: Կարծես անոր կեանքին գերազայն պաշտօնէութիւնը դադրած է: Անոր միսիոնարական գործը՝ վերջացած: Զրկուած է իր փեսմ ճամբորդութեանց ոգեւորիչ ուժէն եւ Շնորհաց Աւետարանը Ասիոյ ու Յունաստանի մէջ տարածելու երջանկութենէն: Անոր ազատութիւնը ստորկութեան փոխուած է: Մթագնած անոր հորիզոնը: Սակայն ճիշդ գայն շրջապատող խաւարին մէջէն չքնաղ ծաղիկներ կը բարձրացնեն իրենց գլուխները՝ պսակուած շողշողուն փառքով: Թեւեալ աւելի առաջ տեսած էր զանոնք բաց ճամբուն եղիւքը, սակայն անոնք իրեն երբեք երեւցած չէին իրենց ներկայ անբաղդատելի զօրութեամբն ու գեղեցկութեամբը: Աստուծոյ

խոստումներուն խորերը հանդիպեցաւ զանձերու որոնց նախապէս թափանցած չէր երբեք: Անոնք կը նմանէին կոկոններուն՝ որոնք բացուելով վարդին կատարեալ գեղեցկութիւնը կը ցուցադրէին: Քրիստոս աւելի մտերիմ յարաբերութեան մտաւ իրեն հետ իր կարօտութեան պահուն եւ ինք այդ ընկերակցութեան մէջ ազանատես եղաւ խոր հրաշալիքներու: Առաքեալը հանդիպեցաւ ծաղիկի մը, որ Յիշողութիւն կը կոչուէր, զանձ մը որ արեգակին շողին տակ երբեք այնքան շլացուցիչ երեւցած չէր, որքան թանձր խաւարին մէջէն: Մոռցուած ողորմութիւններ երկնային շնորհաց նոր երեւոյթներով նկարագրուեցան անոր ազօտ աչքերուն առջեւ: Յուսոյ հրաշագեղ ծաղիկը՝ իր ճոխ աճումով՝ այնպէս շլացուց Առաքեալին աչքերը, որ անոր «Փառաց Յոյս» անունը տուաւ: Մարդկային բարերարութիւններ որ նախապէս թերեւս մութ զգեստներով միայն ներկայացած էին իրեն, սիրուն հանդերձներով իր առջեւ ելան: Կարելի է այցելութիւն մը ստացաւ իր տիրոջ մէջ փախչող Ոնէսիմոս գերիէն, կամ սիրոյ յիշատակներ իր բարեկամներէն որ Փիլիպպէի ու Կորնթոսի մէջ կը գտնուէին: Վերջապէս՝ այս կամ այն կերպով անոր մութ պարագաները հոգեւոր շնորհքներու տեղ տուին ու խաւար անկեանը մէջ կեանքի ամենէն հրաշալի փորձառութիւններուն արժանացաւ:

Սակայն ամենէն մեծ յայտնութիւնը որ Առաքեալին եղաւ իր կեանքի մութ շրջանին, «Քրիստոսի անքննելի ճոխութեանը» յայտնութիւնն էր: Ինչպէս լուսին չեղած գիշերներուն՝ աստղերը հրաշալիօրէն կը լուսազարդեն մութ երկնակամարը, նմանապէս ալ Քրիստոսի անքննելի հարստութիւնը իր շողազարդ լոյսը սփռեց Առաքեալին մռայլ մթնոլորտին վրայ: Այս հարստութիւնը կը պարունակէր «Քրիստոսի Շնորհքը», «Քրիստոսի Սէրը», «Քրիստոսի Ուրախութիւնը», «Քրիստոսի խաղաղութիւնը», եւ կարծես թէ այս զանձերուն անհրաժեշտ էր մթութեամբ շրջապատուիլ որպէսզի երեւան գային անոնց թագուն գազոնիքներն ու փառքը: Առաքեալին մթութիւնը յայտնութեան վայրի մը վերածուեցաւ եւ անիկա սկսաւ բոլորովին նոր լերպով ըմբռնել իր հոգեւոր ժառանգութեան ճոխութիւնն ու ծաւալը: Ուրեմն երբ անոր բարեկամներէն ոմանք կը խօսէին անոր «թշուառութեանը» վրայ, անիկա կ'երգէր իր «ուրախութեանը» վրայ, երբ անոնք մասնաճիւղ կ'ընէին անոր փորձութիւնները, անիկա կը հրճուէր «ա-

մէն միտքէ վեր եղող խաղաղութեամբ» մը. մինչ անոնք կ'արգահատէին անոր աղքատութեան՝ անիկա կը պարծենար թէ «ամէն բան» ունէր, «Ամէն բան առած եմ, ու առատօրէն ունիմ»:

Կան մարդիկ որ ողորմելի երեւոյթ մը կը պարզեն երբ նեղ անկիւններու մէջ կը գտնուին: Երբ մենք կեանքի անապատներուն կը հասնինք, մեր ամենէն մեծ հարցը կ'ըլլայ, «Ապրելու ի՞նչ պաշար ունինք»: Մեր ապրուստի միակ միջոցներն կ'ըլլան ինչ որ խնայած ու ամբարած ենք անցեալին մէջ: Պօղոս Առաքեալ երկինքի մէջ զանձեր զիգած էր, որոնք անոր բարեկամներն ու մխիթարիչներն եղան իր մութ պարագաներուն: Կան մարդիկ որ երբ կը ծերանան կամ առանձնութեան կը մատնուին, ցուրտ ու տխուր պատկեր մը կը ներկայացնեն: Անոնք համակուած կ'ըլլան թշնամական, դաժան, դառն, բար կացայտ, քննադատական, ապերախտ եւ փոքր հոգի տրամադրութեամբ: Ի՞նչ տգեղ պատկեր՝ Սակայն եւ այնպէս այս է բազմաթիւ անհատներու կեանքը, երբ արեգակը մարը կը մանչ, երեկոյեան ցուրտ հովը կը փչէ ու իրենք մինակ կը թողուին:

Բայց ո՞վ չէ ճանչցած նաեւ այրեր ու կրիներ որոնք երբ մթութեան ու անկարողութեան կը մատնուին՝ յոյս ու զօրութիւն կը հագնին: Ապրուստի սիրուն պաշար մը կը ներկայացնեն: Հաւատարմութեան զգացումը զիրենք ուրախ կը պահէ: Հեռաւոր տարիներու քաղցր յիշատակները բարիքներով բեռնաւորուած իրենց կը մօտենան: Անոնց համակրութեամբ լեցուած սիրտերը զիրենք երիտասարդ ու թարմ կը պահեն փայլուն ու հրապուրիչ տեսիլքներ կը ներկայանան անոնց աչքերուն: Եւ ինչ որ այս ամենէն շատ աւելի հրաշալի է, անոնց խոնարհ վիճակին մէջ կը ծագի Բեթլէհէմի նոր առող մը եւ փառաց Տէրը սրբացուցիչ զօրութիւն եւ խաղաղութիւն հագած իրենց կ'երեւայ:

Ինչ տեսակ բանտի մէջ որ գնել կ'ուզես, դիր այս կարգի անհատները, անոնց հետ կը բանտարկես նաեւ իրենց գանձերը: Անոնց նիւթական միջավայրը կրնաս անապատի վերածել, սակայն մենաստանն ու ամալութիւնը կը ցնծան ու անապատը վարդի նման կը ծաղկի ու կը հրճուի:

Թարգ. Ն. Մ.



ԿԱՅՍՐԸ ԵՒ ԵՐԱՆ

Կայսրը— Եթէ քրիստոնէական հաւատքիդ մէջ հաստատ մնալ յամառիս, զքեզ պիտի աքսորեմ: Ոսկ.— Բոլոր աշխարհը իմ Հօրս տունն է, զիս չես կրնար աքսորել:

Կայսրը— Բայց քեզ պիտի սպաննեմ: Ոսկ.— Չես կրնար, վասնզի իմ կեանքս Քրիստոսի հետ Աստուծոյ մէջ պահուած է:

Կայսրը— Քու բոլոր ինչքդ պիտի գրաւեմ: Ոսկ.— Ոչինչ, վասնզի քու ճանչցած հարբստութենէդ բան մըն ալ չունիմ, իմ գանձս երկինքն է, ուր որ է նաեւ իմ սիրտս:

Կայսրը— Բայց քեզ քու բարեկամներէ պիտի զատեմ:

Ոսկ.— Ո՛չ երբեք, Բարեկամ մը ունիմ երկինքը, որմէ չես կրնար զիս բաժնել: Հկայ բան մը որով ինձ կրնաս փրկել:

ՀՈԳԵԿԱՆ ԱԽՏԵՐ

2. ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ.— Վերջին օրերու նըշաններէն մին է, Բ. Տիմ. Գ. 2: Ինչպէս ջերմը մարդկային մարմինը կը տկարացնէ եւ կը վատթարացնէ, այս ախտն ալ մարդուն նկարագիրը կ'ստորնացնէ եւ կը ցածցընէ, որուն հետքերը սեւ բիծերու նման կ'արտաւտորեն մարդկային հոգին:

Աշխարհ անով վարակուած է. անձնատիրութիւն, եսապաշտութիւն եւ շահամոլութիւն զայս սնուցանող այլ ախտեր են, որոնք նաեւ կ'օգնեն իր տարածուելուն եւ փոխանցուելուն:

Կ'ըսեն թէ օձը բարիք չի գիտեր. ապերախտութիւնը օձի ոգին է, որ մարդկային բնութեան մէջ ներգործելով զայն կը թունաւորէ եւ հոգւոյն ամենաազնիւ զգացումներէն եղող երախտագիտութիւնը կ'ապաննէ:

Ախտանիշները.—

1. Ապերախտը բարիքը չի յիշեր, Ժող. Թ. 15 Ծննդ. Խ. 23, Բ. Մնաց. ԻԳ. 22:

2. Ապերախտը ընդունած բարիքին փոխարէն շնորհակալ չըլլար Առկ ԺԷ. 17, 18, Բ. Մնց ԼԲ. 25

3. Ապերախտը ուրիշներուն ըրած ծառայութիւնը ոչինչ կը սեպէ Ա. Թագ. ԻԵ. 40, 41, 24:

4. Ապերախտը վայելած ամէն օրհնութիւնը իր արժանիքին եւ ջանքերուն վերագրելով ապրից մատուցած ծառայութիւնը եւ զօհոգութիւնը կ'անարգէ Ծննդ. ԼԱ. 6, 7:

Աստուծոյ գաւաինելուն մէջ նաեւ կը նըշ-

մարութի ապերախտութեան հետեւեալ ախտա-
նիշները. —

1. Զիրենք՝ իրենց մանկութեան ատենը կը-
րող, սնուցանող եւ իրենց համար ցաւ քաշող
սիրելիները շուտով մոռնալ: Ա. Կոր. Դ. 8:

2. Այլոց Աստուծոյ գործին մատուցած ծառա-
յութիւնը եւ իրենց ընդունած լոյսը անտեսել:
Մարկ. Թ. 37, ԺԴ. 4:

3. Ամէն բաները բարիի գործակից ըլլալը
գիտնալով մէկտեղ տրտունջ եւ դժգոհութիւն:
Հոով. Ը. 28:

Հիւանդութիւնը կ'սկսի փոքր բաներու համար
շնորհակալ չըլլալէն, կը հառնի ծնողաց եւ բա-
րերարներու դէմ ապերախտութեան, եւ կը
սաստկանայ Աստուծոյ դէմ ապերախտ վիճակի
մը, ունայնամիտութեան եւ հոգւոյ կործանումի:
Հոով. Ա. 24:

Հիւանդութիւնը Հափազանց տարածուած ըլ-
լալով մարդ կրնայ անզգալարար վարակուել,
եթէ պէտք եղածին պէս պաշտպանուած չըլլանք.
աշխարհ իր ապերախտ ընթացքովը կը ներգոր-
ծէ եւ ախար կ'սկսի իր աւերները գործել մեր
մէջ:

Պաշտպանութեան միջոցներն են. —

1. Յիսուսի նայիլ եւ Անկէ սորվիլ որ ամէն
բան զնահատել եւ շնորհակալ ըլլալ գիտէր: Ղուկ.
9. 33, Մարկ. Թ. 40, ԺԴ. 9, Յովհ. ԺԱ. 41:

2. Սուրբ Հոգւոյն պատուէրին անսալով, ա-
մէն բանի համար երախտագիտական սրտով գո-
հութիւն մատուցանել: Եփ. Ե. 20, Սաղ. Ծ. 44:

3. Ո՛վ որ ալ ըլլայ, մեզի ըրած ամենափոքր
ծառայութիւնը եւ բարիքը Հմուտալ եւ երախ-
տագիտութեամբ շնորհակալութիւն մատուցա-
նել: Հոով. ԺԶ. 4, Փիլ. Դ. 10:

4. Թող չտալ երբեք որ Սատանան ուրիշ-
ներու ապերախտ ընթացքը մեր աչքին առջեւ
պարզելով եւ մեր զգացումները շարժելով մեր
նկարագիրը ստորնացնելու իր ջանքին մէջ յա-
ջողի: Բ. Տիմ. Դ. 10, 16, Յոր. ԺԹ. 14-19:

Փօն տ'Օպէնաս

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Տէր, Դու մարդասէր ես, ստահակ եւ ստամ-
բակ սրդիքներն եւս Քոյդ են, եկեղեցին կ'ազո-
թէ միշտ առ Քեզ. շնորհ սուր նոցա, որ Քո սէր,
Քո մարդեղութիւն, Քո խոնարհուիլութեան ճանա-
պարհ, Քո խաչի ճաղի մեծ խորհուրդը, Քո լու-
սով ճանչնան, ընդունին եւ հաւատան Քեզ, Տէր:

(Խաչի ճաղ)

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՓԻԿՁԻՆ ՆԱՅԷ

Երբ մանկութեանդ անմեղ օրեր
Անցնին այլեւս անդառնալի,
Եւ երազներ քու ցանկալի
Յնդին իսպառ յար ողբալի,
Մի՛ վհատիր խեղճ արարած,
Փրկչին նայէ բազկատարած:

Երբ բնութեանդ մոլի կիրքեր
Ալեկոծեն քու ներսիդին,
Եւ սարսափած քու հէք հոգին
Ի խոր սուգի թափով մ'ուժգին,
Մի՛ վհատիր խեղճ արարած,
Փրկչին նայէ բազկատարած:

Երբ քու բոլոր սիրելիներ
Մէկիկ մէկիկ անհետանան,
Եւ դուն լքուած, անօղական
Դառնաս այլեւս թափառական,
Մի՛ վհատիր խեղճ արարած,
Փրկչին նայէ բազկատարած:

Երբ անողոք հալածանքներ
Թափով մ'ուժգին քեզ սպառնան,
Եւ քու օրեր աստանդական
Երբեք հանգիստ մը չունենան,
Մի՛ վհատիր խեղճ արարած,
Փրկչին նայէ բազկատարած:

Երբ դժուարին առեղծուածներ
Իրար ետեւ սպառնազին
Զերթ մութ ամպեր գան մթազներ
Հորիզոնը քու հէք մտքին,
Մի՛ վհատիր խեղճ արարած,
Փրկչին նայէ բազկատարած:

Եւ վերջապէս երբ ծով մեղքեր
Սպառնան քեզ կեանքէդ զրկել,
Մեծ կորստեան դատապարտել
Եւ Աստուծոյ զքեզ բաժնել,
Մի՛ վհատիր խեղճ արարած,
Փրկչին նայէ բազկատարած:

Երբ հաւատքով Փրկչին նայիս,
Խոցեալ կողը երբոր տեսնես,
Ներուին պիտի քու ծով մեղքեր
Եւ փարատին քու մեծ վիշտեր.
Քեզ պիտի շնորհուի մի նոր հոգի,
Միշտ երջանիկ, առանց մեղքի:

Վեր. Մ. ՏէՐ ՍԱՀԱԿԵԱՆ

Ալֆօրվի

«ՅԻՍՈՒՍԻ ՆԱՅԻՆՔ» (Եբր. ԺԲ. 2)

Հուստացեալ մը շատ մը պատճառներով կըր- նայ կոյր դառնալ. անոնցմէ երեք հատը յիշենք:

1. Այնքան ուրիշներով կ'զբաղի՝ որ ինքնա- քննութիւն չկրնար ունենալ, և իր բաժինը չառ- ներ: Երբ պատգամ մը լսէ, կամ քարոզողին հանդէպ առաջուրնէ նախապաշարուած ըլլալով, և կամ բնականէն քննադատ բնաւորութիւն ու- նենալով՝ փոխանակ ինքզինքը լսած խօսքերու վը յանդիմանելու՝ քննադատութեամբ կ'զբաղի: Կամ լսած յանդիմանութեան իւրաքանչիւրը՝ ի- րեն ծանօթ ուրիշ թերի հաւատացեալի մը կը յարմարցնէ:

2. Խօսողին դիրքը և խօսքերը այնքան կը զբաւեն զինք՝ որ Քրիստոսի դէմքն ու Քրիստոսի խօսքերուն գեղեցկութիւնը կը պակսի:

3. Այնչափ ինքզինքովը լեցուած կ'ըլլայ որ պատգամին մէջ նկարագրուած Քրիստոսի գե- ղեցկութիւնը չի տեսներ, ամէն նկարագրութեան ինքզինքն ալ անոր բաղդաւաւելով և «ես ալ այդ- պէս եմ» ըսելով:

Յիսուսի նայլինք:

«ՍՈՒՐԲԵՐ ԸԼԼԱԼՈՒ ԿԱՆՁՈՒԱԾՆԵՐՈՒՆ»

(Ա. ԿՈՐ. Ա. 2)

Փրկութիւն գտնող մէկը Քրիստոսի փարախը մտած է. աշխարհէն Քրիստոսի զօշակին տակ անցած է, բայց պէտք չէ մոռնալ ուրիշներու կարգին՝ նաեւ հետեւեալ երեք կէտերը. —

Յովհ. ԺԵ. 15:

1. Անիկա նոյն աշխարհին մէջ կ'ապրի՝ որուն գերին դարձած էր փրկուելէն առաջ: Նոյն ըն- կերներով շրջապատուած է. ընկերներ, որոնք ի- րեն պէս չեն փոխուած՝ «ու այս բանին կը զար- մանան որ դուք նոյն չափազանց անառակութեան մէջ անոնց հետ չէք վազեր, ու հայհոյութիւն կ'ը- նեն» (Ա. Պետ. Դ. 4): Նոյն գինեատենները, զօ- սավայրերը և մեղքի պատճառ եզոզ տեղերը դռները լայն բացած են և կը հրապուրեն: «Դե- մառ... այս աշխարհը սիրեց և զնայ» (Բ. Տիմ. Դ. 10): «Մի սիրէք աշխարհը ոչ ալ ինչ որ աշ- խարհի մէջ է» (Ա. Յովհ. Բ. 15):

Հոով. 2. 19:

2. Անիկա նոյն մարմինին մէջ կ'ապրի, որուն ցանկութեանցը գերին դարձած էր փրկուելէ ա- ռաջ: Եթէ մէկը առաջ գինեմոլ էր, զինիին հա- մը մէկէն ի մէկ բերանէն չիւրթար: Առաջ գոր-

ծէն ելածին պէս հանդարտ քայլով, հանդարտ խղճով, զրախտ գացողի պէս, ճամբուն վրայ նախ զինեւորեն կը մտնէր, քանի մը գաւաթ կը խմէր, յետոյ տուն կ'երթար և հանդարտ սըր- տով ու հանդարտ խղճով կը քնանար: Եթէ պառկելէ առաջ աղօթք մ'ալ ընէր, և աղօթ- քին մէջ ըսէր, «Այսօրուան գործած մեղքերս նե- ըէ», թերեւս գինեատեն դացած ըլլալը իբր մեղք միտքն անգամ չէր գար. և եթէ դար իսկ, «մեղ- քերս ներէ» ըսած ատենը՝ միտքէն անգամ չէր անցնէր թէ, «աղէկ, այսօր Աստուած կը ներէ» բայց վաղը այլեւս պէտք չէ երթամ»:

Բայց Հոգիէն նոր ծնած մարդուն մէջ հոգին է որ կը տիրէ: Մարմինը նոյնն է: Ամէն իրի- կուն գործէն տուն դարձած ատեն ճամբուն վը- րայ այդ նոյն գինեատեն առջիւնէն կ'անցնի, բե- րանը կը ջրոտի, մարմինը կը փափաքի, բայց հոգին կը զսպէ զինքը, և մարդը առանց հոն մտնելու տուն կուգայ: Բայց ենթադրելով թէ օր մըն ալ մարդը ինքզինքը հոգեւորապէս սկար զգալով՝ գինեատեն մօտեցած ատենը մէջը կոխ մը սկսի, «մարմինը ցանկայ հոգիին հակառակ ու հոգին մարմինին հակառակ» (Գաղ. Ե. 17) և մարդը վերջապէս յաղթուի, գինեատեն մտնէ, քանի մը հատ խմէ և յետոյ տուն երթայ: Բայց գիտէ՞ք ինչ կը պատահի այն ատեն: Այդ քանի մը գաւաթ ըմպելիքը իր մէջ կարծես թոյն կը դառնայ. խիղճը հանգիստ չտար. անկողին կը մտնէ՝ բայց չկրնար քնանալ: Ստիպուած ետ կ'ելլէ, Աստուծոյ առջիւ կը խոստովանի իր մեղ- քը, ներողութիւն կը խնդրէ և կ'ուխտէ որ ան- գամ մըն ալ այդ փորձութեան մէջ չի յնայ. և իր ուխտը պահելու համար Աստուծոյ գորութիւն կը խնդրէ:

Պօղոս առաքեալ իսկ կը շարձարուէր այս մարմինէն (Բ. Կոր. ԺԲ. 7, Ա. Կոր. Թ. 27): Շա- տեր Պետրոս առաքեալի ուրացումը կը յիշեն փաստելու համար թէ մեղքէ ազատուիլը անկա- րելի է: Բայց անոնք կը մոռնան թէ անիկա այդ անկումէն անմիջապէս յետոյ դառնապէս լացաւ և յետոյ այդպիսի մեղք մը անգամ մըն ալ չի կրկնեց: «Ապա ուրեմն եղբայրներ, պարտապան ենք ոչ թէ մարմինին մարմնաւորապէս ապրե- լու, վասնզի եթէ մարմնաւորապէս ապրելու ը- լաք, պիտի մեռնիք, բայց եթէ Հոգիով մարմի- նին գործերը սպաննէք, պիտի ապրիք» (Հռով. Ը. 12, 13):

Բ. Կոր. ԺԱ. 3:

3. Նոյն Ստաւանան գոյութիւն ունի, և առաջ- ուրնէ աւելի կոտորի կը յարձակի նորածին հա-

ւատացեալին վրայ, որովհետեւ անիկա իր ձեռքէն յափշտակուած որս մըն է: «Սատանան մը-
որնչո՞ղ առիւծի պէս կը պտըտի եւ կը փնտռէ
թէ ո՞վ կ'լլէ» (Ա. Պետ. Ե. 8): Առաջուան ելած
մէկ պիղծ ուղիին հետ ուրիշ եօթը աւելի չար
ողիւնք ալ կը զրկէ՝ որոնք անդադար ճամբայ
կը փնտռեն նորէն այն մարդուն մէջ մտնելու և
անոր վերջը առաջինէն գէշ ընելու (Մատթ. ԺԲ.
43-45): Բայց Տէր Յիսուս ըսաւ, «Իմ ոչխարներս
Իմ ձայնիս կը լսեն, ես ալ զանոնք կը ճանչնամ
ու իմ հետեւէս կուգան, եւ ես անոնց յաւիտեան-
կան կեանք կուտամ, ու յաւիտեան պիտի չկոր-
սըին, եւ մէկը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ
զանոնք» (Յովհ. Ժ. 27, 28): «Ան որ Աստուծոյ
ծնած է, իր անձը կը պահէ ու չարը իրեն չզըպ-
չիր» (Ա. Յովհ. Ե. 18):

«Ու հիմա, որդեակներ, Անոր մէջ կ'եցէք» (Ա.
Յովհ. Բ. 28):

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

«ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԼԱՆ ՈՒ ԱԿՈՒՆԵՐ ԿՐՃՏԵԼ»

Գնդապետ Չարթրիս իր մահուան անկողին
վրայ կը գոչէր, «750 000 ֆրանք կուտամ այն
մարդուն որ կրնայ վճռական կերպով փառաել
ինծի թէ դժոխքը գոյութիւն չունի»: Որքան ժա-
մանակ որ մարդ առողջ է և գործը յաջող կ'եր-
թայ, որքան ժամանակ որ գերեզմանը եւ յաւի-
տեանականութիւնը մշուշապատ հեռաւորութեան
մը մէջ կորսուած կ'երեւին՝ մարդիկ դժոխքը
թեթեւ կատակախօսութեանց նիւթ կ'ընեն: Բայց
երբ մահուան փոթորիկը կը հասնի ու ապրելու
համար քանի մը համբուած ժամեր կը մնան,
այն ատեն հողին իր ներքին զգացումները, վախն
ու տհաւոր սարսափը երեսուն կը բերէ. այն ատե-
ն յայտնի կ'ըլլայ թէ ամենէն սկեպտիկ ծաղ-
րածուն ալ Աստուածաշունչի նկարագրած դժոխ-
քին ահով ու դողով կը հաւատայ եղբւր. բայց
այս հաւատքը դեւերուն հաւատքն է որոնք «կը
հաւատան եւ կը սարսափին» Յակ. Բ. 19:

«ԱՍՏՈՒԾՈՑ ԽՕՍՔԸ ԿԵՆԴԱՆԻ Է»

Ահաւաստ մարդու մը կիներ հոգեւոր արթը-
նութիւն ունեցաւ. իր խիղճը համոզեց զայն իր
մեղաւոր վիճակին ու նա սկսաւ կանոնաւորա-

պէս Սուրբ Գիրքը կարդալ: Ամուսինը զայս
տեսնելով ըսաւ, «Պարապ Գիրք է Սբ. Գիրքը»,
կեցիր ես ամէն օր քեզի կարդա՛մ՝ զա՞ն մի-
ջեւ որ ալ անկէ ձանձրանաւ ու պզգաս: Նա
սկսաւ այս ընթերցման, եւ ամէն օր գործէն
վերադառնալուն պէս կանոնաւորապէս կը կար-
դար: Եկաւ օր մը երբ Յովհ. Գ. զլուխը լմնցուց
ու իր կնոջը ըսաւ, «Ձե՞ս ուզե՛ր ինծի համար
աղօթել, կը տեսնեմ որ ես խեղճ ու կորսուած
մեղաւոր մըն եմ...»: Անոնք հող ծունկի եկան,
միասին աղօթեցին, միասին Աստուծոյ խօսքը
կարդացին ու միասին փրկութիւն գտան:

«ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ... ԽԱՉԻՆ... ԱՐԻՒՆՈՎԸ»

Ծանր յանցանքով ամբաստանուած բան-
տարկեալի մը դատը կը տեսնուէր: Դատախա-
զը ծանր ամբաստանալի մը կարգաց, բայց նա
հանդարտ էր: Երգուալ դատաւորները զայն յան-
ցաւոր յայտարարեցին, բայց նա հանդարտ էր:
Դատաւորը անոր ծանր պատիժի մը դատա-
պարտուած ըլլալը յայտարարեց, անիկա տա-
կաւին հանդարտ կը կենար: Յայնժամ հանդար-
տօրէն իր զրպանէն հանեց ու ցուցուց ներման
զրութիւն մը որ կրցած էր թաղաւորէն ստա-
նալ: Ահա այս էր իր խաղաղութեան պատճա-
ռը: «Ուստի մենք հաւատքով արդարացած ըլլա-
լով խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր
Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով» Հովհ. Ե. 4:
Արքայական ներման գիրը ձեռքերին՝ մենք ալ
կրնանք կատարելապէս հանդարտ ու խաղաղ
ըլլալ:

«ՀԱՒԱՏՔԸ ՈՐ ՍԻՐՈՎ Ի ԳՈՒԾ ԿԸ ԴՐՈՒԻ»

1540ի վախճանին Պրուքսէլի մէջ ձերբակալ-
ուեցաւ Ժիլ Թիլման՝ սա ամբաստանութեամբ
թէ «Աւետարանին վարդապետութիւնը տարածած
էր»: Արհեստով վարպետ դանակագործ էր եւ իր
շահածին ու ժամանակին մեծ մասը բարեգոր-
ծութեան կուտար: Աղքատաց հանդէպ իր զը-
թասրտութիւնը այնքան մեծ էր որ երբ 1541 Յւլի
26ին զայն կրակի խորոյրկով այրելու տարին՝
առաջին անգամ խեղճերը խորհեցաւ: Հոն վա-
ռելանիւթի հսկայ դէպ մը տեսնելով գոչեց, «Ի՛նչ
հարկ կայ այդքան փայտի իմ խեղճ մարմինս
այրելու. անկէ պզտիկ մաս մը կը բաւէ. այս
քաղաքին մէջ ցուրտէն սառող ընտանիքներուն
խղճացէք եւ այս փայտերուն մնացածը անոնց
բաժնեցէք»:

Ի՛նչ քրիստոսանման վեհութիւն այս նահա-

տակին մօտ, որ տաժանելի մահուան պահուն
խակ ինքզինքը կը մոռնայ եւ ուրիշները կը խոր-
հի:

Տէր, ասոր նման զաւակներ ըրէ մեզ Քեզի:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

«ՄԵՂԱԽՈՐ»ԻՆ ՏԵՂ

Սուրբ Գիրքին մէջ մեղաւորին համար գոր-
ծածուած ուրիշ բաներ են.—

Անաստուած	Եփես. Բ. 12
Բարկութեան որդի	Եփես. Բ. 3
Գերի	Յովհ. Ը. 34
Կատապարտուած	Յովհ. Գ. 18
Երկմիտ	Յակ. Դ. 8
Ձրկող	Միք. 2. 12
Ըմբոստ	Եսայ. Ա. 5
Թշուառական	Յայտ. Գ. 17
Փանտալից	Երեմ. ԺԴ. 12
Իժերու ծնունդ	Մատթ. Գ. 7
Լէզէոն	Մարկ. Ե. 9
Խեղճ	Յայտ. Գ. 17
Մովու կատգած ալիք	Յուդ. 13
Կոյր.	Յայտ. Գ. 17
Հեռաւոր	Եփես. Բ. 13
Ձիթենի (վայրի)	Հով. ԺԱ. 17
Ճանճ (մեռած)	Ժող. Ժ. 1
Մերկ	Յայտ. Գ. 17
Յիմար	Մատթ. ԻԵ. 5
Նենգաւոր	Երեմ. Թ. 2
Շուն	Մատթ. ԺԵ. 26
Ոսկոր	Եզեկ. ԼԷ. 40
Չարագործներու սերունդ	Եսայ. Ա. 4
Պիղծ	Յայտ. ԻԱ. 8
Ստախօս	Յայտ. ԻԱ. 8
Վախկոտ	Յայտ. ԻԱ. 8
Տկար	Հով. Ե. 6
Ցանկացող	Յակ. Դ. 4-4
Քրփրալից	Յուդ. 13
Քարասիրտ	Եզեկ. ԼԶ. 26
Ստար	Եփես. Բ. 19

Սիրելի անապաշխար ընթերցող, բաց Աստու-
տուծոյ խօսքը եւ քննէ այս տեղերը, մտածէ եւ
դարձիր քու ճանքայէդ: Ինչո՞ւ կորստիս:

ՀՐԱՆԴ Զ. ԱՊԱՃԵԱՆ

Պ. Այրէս

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Dr. F. GODET

Նիւթը որով պիտի զբաղինք ունի իր հմայք-
ները բայց նաեւ իր վտանգները: Խորհրդաւոր
քօղը որ զայն կը ծածկէ աւելի գրաւիչ կը դարձ-
նէ զայն: Այս հարցը սուրբ գետնի կը վերաբերի
ու զայն քննած միջոցին վտանգի մը կ'ենթարկ-
ուինք, որ է վստահիլ անբաւարար առաջնորդի
մը՝ երեւակայութեան:

Այս խտրութեան խուսափելու համար, կարելի
եղած չափով թելադրութիւններ ու լուսաբանու-
թիւններ պիտի փնտռենք բնութիւնէն եւ շօշա-
փենք նմանող պարագաներ, զորս պատմութիւնը
կրնայ մեզի հալթայթել: Յետոյ այս տուեալնե-
րը յարաբերութեան մէջ պիտի դնենք անոնց
հետ որ յայտնութեանց Գիրքը կը պարունակէ.
պիտի ջանանք այս պանազան տարրերը լուսա-
բանել, զանոնք փոխադարձաբար իրարու մօտե-
ցնելով:

Երանի՜ թէ կարող ըլլայի այս հետաքրքրա-
կան նիւթը դուրս քաշել այն մթութիւնէն, ուր
խորատուգուած կը մնայ այնքան բազմաթիւ հո-
գիներու համար: Անտարակոյս, թէեւ երկրորդա-
կան, տակաւին կարեւոր է այն դերը որ հրեշ-
տակները կը խաղան երկրի վրայ Աստուծոյ ու-
նեցած մեծ գործին մէջ:

Չորս կէտեր պիտի գրաւեն մեր ուշադրութիւնը:
Ա. Հրեշտակաց գոյութիւնն ու բնոյթը:
Բ. Իրենց զարգացման եղանակը:
Գ. Իրարու հետ ունեցած յարաբերութիւնը:
Դ. Յարաբերութիւնները զորս կը պահեն սե-
զի հետ:

Ա. ՄԱՍ

Հրեշտակաց գոյութիւնը հարցի առարկայ չի
կրնար ըլլալ անոր, որ կը յարի Ս. Գրոց ուսուց-
ման: Անոնց, որք կը մերժեն այս յայտնութիւն-
ները, կամ անոնց, որք կը վարանին անոր պա-
րունակութիւնը ընդունիլ բոլոր կէտերուն մէջ ալ,
անոնց համար արդեօք չը՞ գանուիր բաւարար
պատճառ մը որ իրենց թոյլ տայ ընդունելու թէ
իրողութիւն մ'է էակներու այն դասակարգը որ
կարգ մը կէտերու մէջ գերազանց է քան մարդը:

Երկրի վրայ 3 կարգի կենդանան գոյութիւն-
ներ կը ճանչնանք: Բոյսը, կենդանին, մարդը: Ե-
թէ երբեք ընդունէինք որ արարածներու այս 3
դասակարգները առաջին աստիճաններն են է-

ազնեւորու գրութեան մը, որուն մէջ չորրորդ եւ վերջին աստիճան մ'ալ կայ, որ թէեւ արդեամբ կը պակսի հոս մեր քով, բայց որուն գոյութիւնը տակաւին հրամայական եւ իրաւացի պահանջք մըն է մեր մտքին: Եթէ այդպէս ըլլար, ստոյգ հաւանականութեամբ մը չպիտի հետեւէր որ այս բարձրագոյն դասակարգը, որ անհրաժեշտ է ամբողջութեան ներդաշնակութեան, իրապէս գոյութիւն ունի տեղի մը՝ արարածներու շրջանակի մը մէջ, որ անհասանելի կը մնայ մեր հինգ գգայարանքներուն: Ընդդէմ այս իրողութիւնն է որ հիմա պիտի հաստատենք:

Բնութեան մէջ ներկայացուած երեք կենդանի դասակարգերու մէջ երեւցած, անհատին եւ տեսակին յարաբերութիւնները դիտենք եւ տեսնենք թէ արդեօք այս յարաբերութիւնը մեզ չառաջնորդէ՞ր ենթադրելու այն բարձրագոյն դասակարգը որուն վրայ կը խօսինք:

Բուսական աշխարհին մէջ ինչ որ իրապէս գոյութիւն ունի, տեսալին է, միայն տեսակը: Անհատը միայն ներկայացուած է: Ոչինչ աւելի ոչինչ նուազ: Իր զարգացման յարմարող միջավայրի մը մէջ զրէք վարդ մը, եւ ան պիտի ըլլայ ինչ որ պիտի ըլլար նոյն պայմաններուն մէջ գրուած որեւէ ուրիշ վարդ:

Լեզուարանօրէն՝ բուսական աշխարհին մէջ այդ անհատները «օրինակներ» կը կոչենք, քանզի անոնք համազօր եւ համաման տեսակը կը բնորոշեն ինչպէս լուսանկարի մը օրինակները կը բնորոշեն նմանաձոյլ կադապարները (cliché) զար ճշգրտօրէն կը վերարտադրեն: Իրականութեան մէջ միայն մէկ վարդ կայ, տեսակ վարդը, որ կ'ապրի եւ կը վերածնի անդադար այն վաղանցակ երեւոյթներուն մէջ, ուր մենք կը տեսնենք զայն: Բոյսը կը նմանի անբաժանելի ժառանգութեան մը, որուն իւրաքանչիւր բաժնետէրը կ'ապրի միայն զանգուածին վրայ եւ զանգուածին համար: Բուսական աշխարհին համար անհատը գոյութիւն չունի իբր այն, միմիայն տեսակը կայ:

Կենդանիներուն մէջ տեսակը տակաւին էական է բայց անհատն ալ անոր կողքին եւ անկէ վեր բան մը կ'արժէ: Հոս անհատականութիւնը կ'սկսի քիչ մը երեւիլ. այս անհատականութիւնը կենդանիին մէջ բնագոյն է. կենդանին բնագոյն կը կառավարուի: Արդ ինչ է բնագոյնը, եթէ ոչ տեսակին, սեռին գոյութիւնը անհատին մէջ: Ենթակայ այս անշու եւ անդիմադրելի օրէնքին, անհատը անկարող է իր անձնականութենէն որոշում մը տալու, արձակելու վճիռ մը որ իսկա-

պէս իրը եղած ըլլայ: Ասկէ կը հետեւի պատասխանատուութեան պակասը եւ յետոյ յառաջդիմութեան անկարելիութիւնը: Այսօրուայ առիւծը կ'ընէ ճիշդ ինչ որ կ'ընին իր նախնիքը եւ ինչ որ պիտի ընեն իր ամենավերջին յաջորդները: Եթէ մարդը իր կրթիչ ձեռքը չեւկարէ անոր, կենդանին կը դառնայ եւ անդադար կը վերադառնայ այն շրջանակին որ բնագոյն կը գծէ իրեն: Անհատը կ'ապրի, բայց իբր վերի մը տեսալին: Անհատին բանաբեւրութեան իրեն թոյլ տայ մի քանի քայլ առնելու բանտին գաւիթին մէջ, բայց երբեք պարիսպէն դուրս չի հաներ: (Ուստի կենդանին զերի է իր բնագոյնը):

Կենդանիներէն մարդուն անցնելով կը տեսնենք որ անհատին եւ տեսակին յարաբերութիւնը բացարձակօրէն յեղաշրջուած է: Տեսակը անտարակոյս գոյութիւն ունի մարդոց մէջ: Առանց պատճառի չէ որ կը խօսինք մարդկային սեռի մասին: Ամէն մարդ իր երկրային գոյութիւնը ծնողաց կը պարտի եւ այս է այն կապը որ տեսակը կը կազմէ: Մարդուն մօտ, ինչպէս կենդանիին մէջ տեսակը այն նախնական հիմն է, մութ եւ խորհրդաւոր, որուն վրայ կը զատորոշուի իւրաքանչիւր անհատական գոյութիւն: Սակայն — եւ հոս է որ տեղի կ'ունենայ յարաբերութեան յեղաշրջումը — բնագոյն օրէնքը իր ոյժը մարդուն վրայ ի գործ դնելով մէկտեղ անոր վրայ չտիրեր ճակատագրօրէն, բնագոյն իր առաջին տէրն է, բայց ոչ իր յաւիտեանական բռնակալը: Մարդը կրնայ պայքարիլ իր բնական ախորժակներուն դէմ: Նոյնիսկ խղճին եւ մտքին օգնութեամբ կրնայ յաղթել իր ցանկութեանց, յոյզերուն եւ զանոնք զոհել բարոյական պարտականութեանց սեղանին վրայ: Գերին կրնայ խորտակել բանտին դուռը եւ դուրս ելլել շրջապէս: Եւ քանի որ կրնայ, պէտք է որ ընէ: Անհատը իրական մարդ կ'ըլլայ միայն այն չափով որ կը գործածէ այս փառաւոր առանձնաշնորհը: Եթէ զանց առնէ զայս գործածել կենդանիի մակարդակին վրայ կ'իջնէ եւ նոյն իսկ ի վերջոյ զայն ալ կ'անցնի կոպտութեան եւ զազանութեան մէջ: Իբր հետեւանք այս վարուելակերպին նա աւելի վար կ'իյնայ իր բնական բնագոյններէն զորս նշանակել պարտական էր:

Մարդուն մէջ, ազատ ուելու այս յատկութենէն կը ծագի յառաջդիմութեան կարելիութիւնը: Բնագոյնը անհատին ժամանակաւոր որդին ու պաշտպանութիւնը, իր զարգացման մեկնակէտն է միայն: Անմիջապէս որ նա հաստատ կամքով մը կը խորտակէ այս պատուաւը, իր առջեւ բաց

կը տեսնէ անհատական եւ ընկերային բոլոր կատարելագործութեանց ասպարէզը: Ուրեմն մարդկութեան մէջ տեսակը տակաւին գոյութիւն ունի, բայց անկախ անպայման կաշկանդուած չէ անոր բազուկներուն մէջ: Մարդուն ազնիւ կոչումն է ինքը ըլլալ, իր բնութեան կոյր բնագոյները ազատօրէն ենթակայեցնելով բարոյական պարտականութեանց: Մարդ ո՛չ «օրինակ» մըն է ոչ ալ պարզ «անհատ» մը, այլ ամն՝ մըն է:

Բնութեան մեզի ընծայած գոյութեան այս երեք կէրպերը երբ իրարու կը մօտեցնենք, փաստացիօրէն կը հետեւի օրէնք մը որ ստեղծագործութեանն ըլլալ կը թուի: Այսինքն, տեսակին հետ բազդատմամբ անհատին յարաճուն գերակշռութիւնը:

Ա. աստիճանին անհատ չկայ:

Բ. աստիճանին կայ բայց գերի է:

Գ. աստիճանին ազատ է եւ տէրը այն բոլորին որ իր մէջ տեսակին կեանքը կը կազմէ:

Գոյութիւն ունենալու չէ՝ չորրորդ վիճակ մ'ալ — էականութեւ դասակարգ մ'ալ նոյնիսկ դերագանցքան մարդը որ նաեւ կ'ամբողջացնէ բոլոր սիւտէմը:

Բոլոր մաթիմատիքական շարքերուն մէջ, երեք եզրերը գիտնալով կարելի է ճշգրտօրէն հաշուել չորրորդը: Միջին երկու ծանօթ եզրերը թոյլ կուտան առաջին ծանօթ ծայրէն եզրակացնելու դեռ անծանօթ երրորդ ծայրը: Կեանքի սիստէմին մէջ, կենդանին եւ մարդը չէ՛ն կրնար ըլլալ այն երկու միջին տուէչները որոնցմով միտքը կրնայ բարձրանալ բոյսի գաղափարին որ առաջին ծանօթ ծայրն է, երկրորդ դեռ անծանօթ ծայրին, այսինքն հրեշտակին:

Յարգ երկրի վրայ երեք կերպ գոյութիւններ գտանք: Տեսակը առանց անկախին, անհատը գերի տեսակին եւ տեսակը նուաճուած անհատէն: Դեռ կարելի տեսակ մը կը մնայ, առաջինին հակասեան՝ անկախը առանց տեսակի:

Եթէ լաւ խորհինք, այս քիչ մը տարօրինակ բանաձեւը ցոյց կուտայ գոյութեան եղանակ մը որ շատ պարզ եւ մեր գոյավիճակէն նուազ կընճոտ է: Էականութեւ դասակարգ մը, որոնց մօտ տեսակը գոյութիւն չունի եւ իւրաքանչիւր ոք իր գոյութիւնը կը պարտի ոչ թէ իրեն նման ծնողներու, այլ անմիջապէս Ստեղծագործ կամքին: Արդեօք հրեշտակները չէ՛ն, որոնց գոյութիւնը այս կերպով կ'ամբողջացնէ ստեղծագործութեան սիստէմը:

Մեր նկարագրած գոյութեան կերպը ճիշդ այն է որ Սուրբ Գիրքը կը վերագրէ հրեշտակ կոչ-

ուած այն խորհրդաւոր էականերուն: Մինչ մեր վրայ խօսած ատեն յաճախ կը գործածէ «որդի մարդոյ» ոճը, հրեշտակները կը կոչէ «Աստուծոյ որդիներ», բայց երբե՛ք «հրեշտակաց որդիք»: Եւ ինչո՞ւ, որովհետեւ անոնք ի գոյ եկան ուղղակի ստեղծագործութեան ճամբով եւ ոչ թէ որդեծնութեամբ:

Սուրբ Գրոց մէջ հրեշտակաց բնոյթին մասին որպէս լուսաբանող բացատրութիւն կը գտնենք Յիսուսի հետեւեալ արտայայտութիւնը որ ուշագրաւ մերձեցում մը կը հաստատէ հրեշտակաց եւ փառաւորեալ հաւատացեալներու միջեւ. «Այս աշխարհին որդիները կին կ'առնեն եւ էրկան կը տրուին, բայց անոնք որ արժանի պիտի ըլլան այն աշխարհին հասնելու ու մեռելներէն յարութիւն առնելուն, ո՛չ կին կ'առնեն, ո՛չ էրկան կը տրուին, որովհետեւ ա՛լ չեն կրնար մեռնիլ», քանզի հրեշտակներու հաւասար են ու Աստուծոյ որդիներ են, վասնզի յարութեան որդիներ են» (Ղուկ. Ի. 34-36):

Այս յայտարարութիւնը հրեշտակաց բնոյթի մասին չորս տուեալներ կը պարունակէ:

ա. Այն էականը մարմիններ ունին, վասնզի յարութիւն առնողներուն մարմինները անոնցին պիտի նմանի:

բ. այս մարմինը իր գոյութիւնը որդեծնութեան եղանակի մը չէ որ կը պարտի այլ անմիջական ստեղծագործութեան մը, վասնզի իր ծագումը նման է այն մարմիններու ծագման, զորս հաւատացեալները պիտի ունենան յարութեան իրողութեամբն: Գալիք կեանքին մէջ փառաւորեալ հաւատացեալները իրենք ալ հրեշտակաց պէս արժանի պիտի ըլլան կրելու «Աստուծոյ որդիներ» անունը. Աստուծոյ որդիներ են վասնզի յարութեան որդիներ են (հ. 36):

գ. Հաւատացեալներու միջեւ ամուսնական յարաբերութիւն տեղի չպիտի ունենայ ինչպէս տեղի չունի հրեշտակաց միջեւ:

դ. Ամուսնական յարաբերութիւնէ այս ազատագրումը, այս երկու տեսակի էականերուն մէջ ալ պիտի համապատասխանէ մահուանէ ազատ ըլլալու: (Հրեշտակները մահ չեն տեսներ):

Տէրջը յայտարարութեան այսքան յստակ պարունակութիւնը կը համապատասխանէ ճշգրտօրէն այն արդիւնքին, որուն մենք հոսանք, առաջնորդուելով բնութեան մեզի ներկայացուցած կենդանի էականութեւ քննութենէն:

Եթէ արեւմտեան եկեղեցիներէն հիմ ունին, եւ թէ Յիսուս կը խօսի իր մէկը որ լաւ

հմուտ է իր խօսած նիւթին, կրնանք հրեշտակաց իրական ըլլալուն եւ անոնց բնոյթին հարցը լուծուած սեպել եւ զանոնք նկատել իբր էականեր որոնք իրենց գոյութիւնը միայն Աստուծոյ կը պարտին: Անոնք մեր արդի մարմինէն գերազանց մարմին մը ունին, վերջապէս որոնց մօտ գոյութիւն չունի ո՛չ սեռի զանազանութիւնը, ո՛չ ալ կեանքի կորուստը որ մահուան կը յանգի:

Հիմա կրնանք երկրորդ քայլ մ'ալ առնել մեր ուսումնասիրութեան մէջ, եւ փնտռել թէ ի՞նչ ըլլալու է այս էականերուն զարգացման եղանակը:

Թարգ. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

ԿԵՆՍԱՒՐԱԿԱՆ

ԱՏՈՒՅ ՄՕՆՕ

ՀԻՄՆԱԴԻՐ «ԱԶՍՏ ԵԿԵՂԵՑԻ»ԻՆ

Լիոնի եկեղեցւոյն հոգաբարձութեան ղէմ մարտնչումի փոթորկալից օրերուն էր որ Մօնօ հիմնեց իր ընտանեկան յարկը: Իր կեանքի ընկերուհւոյն մասին ինք անձամբ պրած է, «նշանածս Սկովտլանտի մըն է... դուստր բարեպաշտ ծընողաց. իր մանկութեան օրերէն հաւատքի մէջ կը թրած է եւ քրիստոնէական փորձառութեան դպրոցին մէջ հասունցած: Բնութենէն օժտուած է ճախ ընդունակութիւններով եւ իւրացուցած է շատ մը օգտակար ծանօթութիւններ: Սակայն ամենէն հարուստ պարգևները նուիրած է անոր Աստուած իր շնորհքովը — լուսաւորեալ բարեպաշտութիւն, անկեղծ խոնարհութիւն եւ հեղութիւն... Մասնաւորապէս ուրախ եմ որ իմ Հաննաս ունի այն բոլոր առաքինութիւնները, որոնք ինծի կը պակսին ցաւալիօրէն: Կը յուսամ թէ իմ ամուսնական կեանքիս մէջ պիտի կրնամ զանոնք ստանալ ու զարգացնել»:

Պատկազրութիւնը տեղի ունեցաւ 2 Սեպ. 1828 Մօնոյի բնակարանին մէջ: Մօնօ յուսախար չեղաւ: Տիկին Հաննա սիրալից անձնութեամբ իր ամուսնոյն կողքին քալեց՝ մինչեւ անոր մահը: Ամուսնութեան առաջին տարիներուն իսկ, Լիոնի Հոգաբարձութեան հետ ունեցած զօռւարին բաղխումներու ատեն Մօնօ յանձին իր տիկնոջ զտաւ օգտակար բարեկամուհի մը, որուն կրնար վստահիլ ամէն ատեն. իր անյողզող հաւատքովը, սրտագին սիրովը, լուռ ու հանդարտ զործունէութեամբը նէ կզատ իր էրկանը համար

զօրաւոր յենարան մը: Նէ բարեկամուհի էր աղքատներու, ցածագգիններու — բոլոր անոնց որոնց ուրիշ մը դժուարութեամբ կարեկցութիւն կը ցուցնէ»:

Ինչպէս նախորդ յօդուածին մէջ տեսանք, 10 Ապրիլ 1832ին պետական եկեղեցին պաշտօնանկ ըրաւ Մօնօն: Ասով երիտասարդ ամուլը մատնեցաւ զօռւարին կացութեան մը. ընտանիքի անդամներուն թիւը երթալով կ'աճէր եւ պաշտօնանկութիւնը զայն գրկած էր հաստատուն եկամուտէ, եւ ենթարկած տնտեսական տագնապի: Ճամբան մուծ էր:

Կարելի էր գուրս ելլել այդ դժուարութիւններէն, կրնար ժընեւ երթալ՝ իբր աստուածաբանութեան ուսուցիչ կամ Լօզան՝ իբր հովիւ եկեղեցւոյ մը, որ ինքզինք ազատած էր արդիական եկեղեցւոյնէրու շրջանակէն ու հաւատացեալ պատուելիի մը կարօտը կը քաշէր: Սակայն Տէր եւ Տիկին Մօնօ իրենց տնտեսական տագնապէն ազատուելու վրայ խորհելէ աւելի՝ կը մտածէին Տէրոջ գործի մասին: Կը մտածէին այն ոչխարներու մասին, զորս Հովուապետը Լիոնի մէջ իրենց յանձնած էր:

Մօնոյի Լիոն գալէն առաջ հոն արթնութիւն մը տեղի ունեցած էր՝ աւետարանչական զործունէութեամբը զուիցերիացի ու անգլիացի մեթոտականներու Արթնցողները բաժնուած էին պետական եկեղեցիէն եւ կազմած առանձին եկեղեցի մը: Սակայն Մօնոյի Լիոն հաստատուելէն յետոյ միացած էին առաջնոյն, քանզի նկատած էին որ կորովի եւ Ս. Հոգիով լեցուած երիտասարդ պատուելիին իրենց զօրաւոր սնունդ կրնար մատակարարել: Ասոնց վրայ աւելցած էին ուրիշ շատեր, որոնք հետզհետէ զարձի եկած էին Մօնոյի քարոզներով ու աշխատութեամբը:

Ասոնք ամէնը ախուր վիճակի մը պիտի ենթարկուէին եթէ Մօնօ հեռանար Լիոնէն: Ուստի նա իբր Աստուծոյ կամքը նկատեց՝ միացնել անոնց ամէնը եւ կազմել «Լիոնի Աւետ. Ազատ Եկեղեցին», որ հետզհետէ կազմակերպուելով մեծ օրհնութիւն եղաւ ֆրանսայի համար: Անոր նըկատմամբ այսպէս արտայայտուած է Մօնոյի կենսագիրներէն մին.—

«Այս ազատ եկեղեցիին կազմակերպումը Աստուծոյ Մօնոյի համար դժուար ու յոգնեցուցիչ աշխատանք մըն էր: Միայն անխոնջ համբերութեամբ, անձնութեամբ, արթնամտութեամբ եւ հեղութեամբ եւ աղօթքով ու խրատով յաջողեցաւ անիկա Լիոնի (ազատ) եկեղեցւոյն զբօշմել աւետարանական ազնուասրտութիւնը... Իր

պատմութեան սկզբնաւորութենէն յի վեր կը փը-
չէր առաքելական կենսունակ շունչ մը որ յա-
ռաջ կուպար սրտաբուղիս աւարակարգ աղօթ-
քի կեանքէ: Ասիկա արծարծուած էր հովիւին օ-
րինակովը հօտին մէջ, որ կանուխէն մեծ մղում
մը կ'զգար՝ իր հոգեւոր կեանքը տարածելու
նաեւ իր շուրջը — թէ՛ հեռակայ հեթանոսներուն
եւ թէ՛ մերձակայ լքեալներուն, անհաւատներուն
եւ ուրիշ դաւանանք ունեցողներուն մէջ: Այս
միսինարական գործին կը մասնակցէին եկեղե-
ցւոյ բոլոր անդամներն ալ, բայց մանաւանդ
կարգ մը հոգեւորական երկտասարդներ, որոնք Լի-
ոնի ու շրջակայից մէջ շատ մը անձեր Աւետա-
րանի ծանօթութեան առաջնորդեցին: Քրիստոնե-
այ նախկին եկեղեցիներու նման՝ Լիոնի աւե-
տարանականներն ալ կ'ապրէին թշուառութեան
մէջ, քանզի միայն քանի մը հատ բարեկեցիկ
անդամներ ունէին. մեծամասնութիւնը հոգեւոր
գործին կրնար նպաստել աղօթքով ու բարի կա-
մեցողութեամբ:

«Համայնքին վերաբերեալ եկեղեցւոյն ու դպ-
րոցին ներքին շինութեան զբաղման» քիչ ետքը
միացան կարգ մը քրիստոնէական սիրոյ գործեր
որոնք կը բղխէին անդամներու ներքին մղումէն՝
մասնակցելու Աստուծոյ փրկութեան մեծ գոր-
ծին, հեթանոսներու եւ քրիստոնէաներու մէջ»:

Եկեղեցւոյ աղքատութիւնը յաճախ ճնշիչ էր,
բայց Աստուած օգնութեան կը հասնէր զարմա-
նալի կերպերով: Այսպէս, նեղ ժամանակի մը
մէջ Մօնօ իր հօրմէն ստացաւ իբր նուէր 750
ոսկի ֆրանք. ուրիշ առթիւ մը 1000 ոսկի ֆրք.
նուիրեց բարեկամ մը. որ արդէն իր դրամովը
տպել տուած էր Մօնոյի քարոզները: Ուստի ի-
րաւունք ունէր Մօնօ գրելու իր ընտանիքի բա-
րեկամուհիներէն միոյն, «Ինծի հետ չէ՞ք սքան-
չանար ողորմութեանը վրայ մեր Աստուծոյն, Որ
ինծի անսպասելի օգնութիւններ զրկեց այն վայր-
կեաններուն, երբ սպառած էին իմ բոլոր միջոց-
ներս: Երկրի վրայ կա՞յ աւելի հարուստ մարդ
մը քան զիս, որ ինծի բոլոր պէտք եղածը իմ
երկնաւոր Հօրմէս կը ստանամ՝ ճիշդ տոներն:
Ինչ տարբերութիւն կայ իմ եւ Պր. այսինչին
միջեւ, որ դրամատան մէջ 100.000 ոսկի ֆրանք ու-
նի: Միայն սա, որ անիկա իր հարստութիւնը
մարդկային երաշխաւորութեան վրայ հաստա-
տած է, իսկ ես իմինս Աստուծոյ խոստումներուն
վրայ: Զէ՞ որ այս երաշխաւորութիւնը ամենէն
ապահովն է: Եւ որչա՞փ բաղդաւոր, երջանիկ ենք
մենք, որ սորված ենք ասոր վստահիլ»:

Այդ վստահութիւնը յուսալար չրբաւ Մօնօն:

Հետզհետէ աւելի առատ գումարներ ընդունեց
անիկա: Իր մէկ կոչին վրայ իրեն օգնութեան
հասան Պրանսայի, Զուիցերիայի եւ մանաւանդ
Անգլիոյ ու Ամերիկայի քրիստոնէաները եւ ին-
քը կրցաւ աւելի ընդարձակել թէ՛ ներքին եւ
թէ՛ արտաքին միսինարական գործը: Աւետա-
րանի պատգամաբերները կը շրջէին ամէն կողմ
եւ կը ցանցին յաճախ արցունքով ազնիւ սեր-
մը, որ յետոյ առատ պտուղ բերաւ:

Մօնոյի մահէն երկար տարիներ յետոյ Պրան-
սայի բողոքականներուն կարեւոր ներկայացու-
ցիչներէն մին անոր այս գործին նկատմամբ
գրած է. —

«Անկէ ի վեր 30 տարիներ անցած են եւ այ-
սօր Լիոնի աւետարանական (ազատ) եկեղեցին
բազմաճառ, կենդանի համայնք մըն է. ունի 4
ձեռնադրեալ հովիւներ, շատ մը աւետարանիչ-
ներ եւ Լիոնի մէջ ու շուրջ 8 մատուռներ, ուր
գործաւոր դասակարգին աւետարան կը քարոզ-
ուի: Այսպէս, պետական եկեղեցւոյ վարչութիւնը
անգիտակցօրէն ու ակամայ պատճառ եղաւ Ա-
տուֆ Մօնոյի խիստ օրհնեալ գործին»:

Քիչ ետքը պիտի տեսնենք թէ Մօնօ ուրիշ
աւելի բարձր ու օրհնաբեր գործերու կանչուե-
ցաւ: Սակայն ուր որ ալ գնաց, իր առաջին սէրը
նուիրուած մնաց Լիոնի «Աւետ. Ազատ Եկեղե-
ցւոյն»: Անոր աւետարանչութեան ու քրիստոնէ-
ական սիրոյ գործերուն, որոնք տարածուած էին
ամբողջ հարաւային Պրանսայի մէջ, Մօնօն ան-
զադար նպաստեց՝ անոր համար աղօթելով եւ
բարեկամներ գտնելով: Անոր յատկացուց նաեւ
հասոյթը իր մահէն քիչ առաջ գրած ու հըրա-
րատարակած մէկ ոտանաւորին՝ Յիսուս Քրիս-
տոսի յարութիւնը մեռելներէն: Եւ երկնային
ուրախութիւն մը զգաց նոյնիսկ իր անտանելի
ցաւերուն ատեն երբ իմացաւ որ այդ ոտանա-
ւորը շատ մը օրինակներով ծախուած է եւ կա-
րեւոր գումար մը բերած է Լիոնի «Աւետ. Ազատ
Եկեղեցւոյն»:

X X X

Ապաշխարութեան եւ վերստին ծնունդի մէջ
ահագին տարբերութիւն կայ: Կը նմանի մարդու
մը որ գիտէ թէ իր հին տունը փլփլած է, բայց
պէտք է մտածէ զայն հիմէն քանդել եւ անոր
սեղ նոր տուն մը շինել:

«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, թէ որ
մարդ մը ՆՈՐԷՆ չծնանի, չկրնար Աստուծոյ թա-
գաւորութիւնը մտնել» Յովհ. Գ. 5:

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԿՈՅՐ ԵՐԳԻՉ ՄԸ ՈՐ 8000
ԵՐԳԵՐ ԳՐԵՑ

Ֆէննի Քրասպի ծնաւ 1820 Մարտ 24ին Նիւ Եօք նահանգին մէջ: Ծնանկէն քանի մը շաբաթ յետոյ անոր երկու աչքերը կոյր եղան: Մէկ տարեկան չեղած անոր հայրը մեռաւ եւ պատիկ կոյր աղջիկը իր մեծ մայրիկին խնամքին մնաց, որովհետեւ մայրը գործի կ'երթար: Ֆէննիի մեծ մայրիկը այնքան կը խղճար իր կոյր թոռնիկին որ իր ձեռքէն եկածը կ'ընէր անոր մտքի աչքերը գործածելու: Արեւին մարը մըտնելուն գոյները կը բացատրէր, լուսինն եւ աստղերուն մասին կը խօսէր այնքան պարզ որ Ֆէննի իր մտքովը գրեթէ կը տեսնէր կապոյտ երկինքը, ճերմակ ամպերը եւ գոյնզգոյն ծիածանները: Նա թռչունները ճանչցաւ անոնց երգերովը, եւ անոնց մասին աւելի բան սորվեցաւ քան շատ ուրիշ մանուկներ, որոնք կրնան աչքերով տեսնել: Նա մեծ մայրիկին հետ պտոյտի վազած պահուն վայրի ծաղիկները չէր տեսներ, բայց անոնց անուշ բուրուամը կը հոտոտէր: Երբ Ֆէննի աւելի մեծցաւ կրնար շօշափելով իր ճամբան քաշել ու նոյնիսկ ձի հեծնել: Գառնուկ մը ունէր իրեն սիրունիկ քարեկամ, ու երբ զառնուկը մեծ ոչխար մը եղաւ ու ծախուեցաւ՝ նա շատ ցաւեցաւ:

Երբ Ֆէննիի դեռ շատ պզտիկ էր, նա սկսաւ ոտանաւորներ շինել: Իր քարի մեծ մայրիկը անոր շատ մը բաներ պատմեց Սուրբ Գիւրգէն եւ համարներ գոց սորվեցուց որով նա Աստուծոյ խօսքը իր սրտին մէջ կրնար պահել: Ֆէննի լըսեց թէ դպրոց մը կայ ուր կոյրերը կարգաւ կը սորվին: Իր մայրիկը շատ ազգատ ըլլալուն չէր կրնար զինք հոն գրկել: Ֆէննի կը հաւատար թէ Աստուած ամէն բան կրնայ ընել, ուստի ըսկըսաւ աղօթել որ Աստուած զինքը դպրոց ղըրկէ: Աստուած անոր աղօթքին անմիջապէս պատասխանեց՝ բայց Ֆէննի միշտ կ'աղօթէր, միևնոյն ատեն իր սիրելի մեծ մայրիկէն կը սորվէր ինչ որ կրնար: Նա լսեց մեծ բանաստեղծ Միլտոնի պատմութիւնը որ իրեն պէս կոյր էր: Վերջապէս Աստուած անոր աղօթքին պատասխանեց եւ կոյր աղջնակը շատ ուրախացաւ Նիւ Եօք դպրոց երթալով:

Դպրոցին մէջ Ֆէննի նախ ինքզինքը մինակ զգաց եւ մայրիկն ու մեծ մայրիկը կարօտացաւ: Բայց շուտով իր կոյր ընկերներուն վարժուե-

ցաւ եւ անոնց մէջ սիրելի ու անուանի աշակերտ մը եղաւ: Նա կը փափաքէր բանաստեղծութիւն ուսանիլ, ու թէեւ նախ արգիլուեցաւ, բայց օր մը բժիշկ մը եկաւ իրենց դպրոցը եւ Ֆէննիի գանկը եւ ուղեղը քննելով՝ ըսաւ թէ այս աղջիկը բանաստեղծ մը կրնայ ըլլալ, որմէ յետոյ թոյլ տրուեցաւ անոր բանաստեղծութիւն ուսանիլ որչափ որ կը փափաքէր: Ֆէննի 12 տարի համբերութեամբ սերտեց երաժշտութիւն, գեղարուեստ եւ գրականութիւն: Յետոյ սկսաւ հոգեւոր երգեր գրել: Անոր առաջին գրած երգը որ շատ լեզուներու թարգմանուած է եւ աշխարհի ամէն կողմը կ'երգուի, այս է, «Մի անցնիր ինձմէ Փրկիչս»: Օր մը Գորիայէն միսիոնար մը եկաւ եւ պատմեց թէ հոն Գորիայի մէջ պզտիկ կոյր աղջիկ մը կար որ շատ անուշ ձայնով Ֆէննիի երգերը կ'երգէր: Մարդիկ հարիւր մղոն տեղէ կուգային զայն մտիկ ընելու եւ անոր անունն ալ Ֆէննի Քրասպի դրած էին: Չինացիներ, ճափոնցիներ եւ ուրիշ շատեր Ֆէննի Քրասպի երգերը կ'երգէին իրենց լեզուներով:

Ֆէննի Քրասպի գրած է 8000ի մօտ երգեր, որոնք հազարաւոր հոգիներու սրտերը մխիթարած են եւ շատերու ապաշխարութեան պատճառ եղած: Հայերէնի ալ թարգմանուած իր երգերէն յիշենք միայն հետեւեալները. —

«Փրչիս քաղուկներուն մէջ պիտի հանգչի հոգիս» — 209

«Ով Յիսուս հոգիս պահէ միշտ խաչիդ մօտերը» — 103

«Տէր Քու ոտից առջին կ'իյնամ անոյցս» — 129

«Մի անցնիր ինձմէ Փրկիչըս, ազադակս լըսէ» — 192

«Օրհնեա՛լ երաշխիք, ի՛մս է Յիսուս» — 229

«Բեղ համար ով սպաւոր խաչին քով տեղ կայ» — 285

Հակառակ իր կոյր ըլլալուն Ֆէննի Քրասպի շատ տեղեր կը պտըտէր ու Յիսուսի սէրը կը քարոզէր: Երեկոյ մը իր քարոզին մէջ ըսաւ, «Եթէ ձեր մէջ երիտասարդ մը կայ որ իր մայրիկին սիրաւ ցաւցուցած ու անկէ բաժնուած է՝ կ'ուզեմ ժողովէն յետոյ զինք տեսնել»: Իրաւ ալ 18 տարեկան պատանի մը իր քով եկաւ եւ պատմեց որ թէեւ իր մայրիկը մեռած ատեն անոր խօսք տուած էր ապաշխարել ու երկինքի մէջ անոր միանալ, բայց շատ մեղաւոր կեանք մը ապրած էր: Ֆէննի անոր հետ խօսեցաւ ու աղօթեց մինչեւ որ այս տղան իր սիրաւ Յիսուսի տուաւ: Այդ զիշեր Ֆէննի գրեց իր ա-

մենէն նշանաւոր երգերէն մին որմէ մէկ համար
կը թարգմանենք հոս:

«Փնտտէ մոլորեալներն, մեղքով մեռածներն,
Խըղճա, ազատէ, մեղքէն, դժոխքէն.

Արցունքով աղօթէ, սիրով համոզէ,

Պատմէ անոնց Փրկչին մահն աննրման.

Կըրակէն յափշտակէ, վախով ազատէ,

Յիսուսի լիւր զանոնք, նա կը փրկէ:

Ֆէննի Բրասսպի, այս կոյր սուրբ երգիչը 94
տարի ապրեցաւ եւ մինչեւ իր կեանքին վերջը
Փրկիչ Յիսուսը սիրեց իր բոլոր սրտով եւ Անոր
ծառայեց:

.....

ՅԻՍՈՒՍԻ ՔՈՎ ԱՄԷՆ ԱՆ ՄԵՐ ԱՐԺԷՔ ՌԻՆԻՆ

Կարդացիք, սիրելի զաւակներ, վերի պատ-
մութիւնը: Ի՞նչ ներշնչող է ան եւ որքան գործ-
նական դասեր կան սորվելիք անոր մէջ:

Ձեզմէ ոմանք թերեւ կոյր տղու մը կամ աղ-
ջկան մը հանդիպեցան եւ խորհեցան թէ ի՞նչ
կրնայ ընել ասիկա. որքա՛ն խեղճ վիճակ մը
ունի նա: Օ՛հ, միշտ մթութեան մէջ մնալ ու պը-
տըտիլ սարսափելի՛ բան է: Կրնա՞յ ըլլալ որ կոյր
մըն ալ ինքնիրեն սապէս խորհի, «ա՛հ, ես ի՞նչ
կրնամ ընել. ուրիշ տղաք կը ցատկաւորեն, կը
ճողովեն, կը տեսնեն աշխարհը ու անոր գեղեցի-
կութիւնը, իսկ ես միշտ արգելք մը կը գտնեմ
իմ առջեւ. իմ աշխարհս որքա՛ն նեղ է, աւելի
լաւ չէ՞ր մեռնիլ, քան այսպիսի վիճակի մը մէջ
ապրիլ»: Սիրելի զաւակներ, երկուքդ ալ կը սը-
խալիք: Տէր Յիսուս որ ամէն բան գիտէ, ամե-
նուն արժէք տուաւ եւ ամէնն ալ իրենց յար-
մար տեղը դրաւ ապրելու եւ իրենց պաշտօնը
կատարելու իր մեծ ստեղծագործութեան մէջ:
Ուստի մի յուսահատիր թէ որ կոյր մըն էս: Կը
ճանչնամ մե՛ծ կոյր բրօթներ, աստուածա-
բան, երաժշտագէտ, գրագէտ, բանախօս, որոնք
բնա՛ւ վար չեն մնացած ուրիշներէ: Դուն ալ
կրնա՞յ ըլլալ այսպիսի մէկը Տէրոջը շնորհքով:
Միայն մէկ բան միտքդ դիր. Տէր Յիսուսը սիրել
եւ Անոր հնազանդիլ եւ մինչեւ վերջը հաւատա-
տարեմ ըլլալ Անոր: Սաղմոսին մէջ կ'ըսէ, «Տէ-
րոջը յանձնէ քու ճամբագ ու Անոր յուսա եւ Ա-
նիկա պիտի կատարէ»: «Տէրոջմով ուրախացիր
եւ Անիկա կուտայ քեզի քու սրտիդ խնդրու-
ածքները»:

Իսկ ձեզի, միւս զաւակներուդ կը թելադրեմ
ըլլալ թէ արհամարհէք կոյրերը, քանզի անոնց
Տէրը արհամարհած կ'ըլլա՞ր, որ է Յիսուս: Հա-

պա զանոնք միշտ յարգեցէք եւ սիրեցէք զանոնք:
Ինչո՞ւ կը յարգեմ կոյր մը, քանզի թէեւ անիկա
արտաքին տեսողութենէ զրկուած է, բայց անոր
միւս զգայարանքները աւելի նուրբ են քան ի-
միսներս: Անոր աչքերը կարծես թէ անոր մա-
տերուն ծայրն ըլլային: Անիկա շօշափումով ա-
ւելի որոշ կ'զգայ խորտուրտութիւնները, քան
ես իմ աչքերովս: Նա դիւրութեամբ կը կարգայ
իր առջեւ զրուած կոյրերու գիրքը: Իր ականջը
շատ սուր է. իւրաքանչիւր լսած ձայնը իր սըր-
տին մէջ տեղ կը գրաւէ եւ կը հնչէ հոն ու աւե-
լի շուտ կը վերարձագանգէ քան իմինս, հա-
կառակ որ երաժշտական վարժ ականջներ ու-
նիմ: Կը ճանչնամ կոյր մը, որու իմ մանկութեանս
ատեն միայն մէկ անգամ հանդիպած էի (մէկ ե-
րեկոյ մեր տունը մնաց), եւ 7-8 տարիներ յետոյ
երբ ես ա՛լ պատանի մըն էի, դիւ ճանչցաւ իր
չկարծած հեռաւոր տեղի մը մէջ, ու երբ զար-
մանքով հարցուցի թէ ինչպէ՞ս նա ճանչցաւ դիւ,
պատասխանեց որ ձայնէն:

Կոյրերը չունին աչքեր արտաքին աշխարհը
դիտելու, սակայն ունին աւելի զօրաւոր ներքին
աչք մը մարդկային կեանքի պողտնիքներուն
ներքին գեղեցկութիւնները աւելի յստակօրէն
դիտելու: Բնաւ չեմ կրնար մոռնալ մէկ տար-
ուան գործունէութիւնս, որուն մէջ մօտէն շփման եւ
յարաբերութեան մտայ Հալէպի կուրանոցի ա-
շակերտաց հետ. հոն անոց սորվեցնելու պահուս
անոնցմէ աւելի մնայուն բաներ սորվեցայ:

Ձեմ կրնար մոռնալ նաեւ ասկէ ճիշդ տասը
տարիներ առաջ Ալգասի նշանաւոր կոյրերու
հաստատութեան մը այցելութեանս պահուն
առած տպաւորութիւնս: Հոն հանդիպեցայ ի մէջ
այլոց տասը տարեկան կոյր աղջկան մը, որ փա-
փաքած էր մասնաւորաբար ինծի հետ խօսիլ: Իր
փափաքը սիրով կատարելէ յետոյ հարցուցի ի-
րեն քնքշութեամբ մը, «Ձե՞ս տըմի՞ր որ կոյր
ես ու չեմ կրնար տեսնիլ»: «Ո՛չ», պատասխա-
նեց աղջիկը, «այսպէս աւելի լաւ կը տեսնեմ Յի-
սուսը»: Պզտիկ աղջիկը շիտակ կը խօսէր, քան-
զի ճշմարտութիւն է թէ կոյր մը իր ներքին աչ-
քերով աւելի մօտէն կը տեսնէ Յիսուսը քան
մենք եւ աւելի մտերիմ յարաբերութեան կըր-
նայ գալ Անոր հետ քան տեսողութիւն ունեցող
մը: Քանզի տեսութիւն ունեցողները վայրկեանը
վարկեանին տարբեր բան մը տեսնելով ստիպ-
ուած են իրենց մտքին ու սրտին մէջ գա-
նոնք տպաւորել եւ վերլուծել. այսպէս անոնք
աւելի մեծ փոփոխութիւն մէջ են ցրուածութեան, քան
կոյրերը: Մեր կրօնական եւ հոգեւոր կեանքն ալ

շատ անգամ աչքի միջոցաւ աշխարհէ եկած այլ եւ այլ ազդեցութիւններուն կ'ենթարկուի, մինչդեռ կոյր մը միշտ աւելի ազատ ըլլալով արտաքին ազդեցութիւններէն, կրնայ իր միտքը կեդրոնացնել Քրիստոսի վրայ եւ աւելի յստակ կերպով տեսնել եւ ճանչնալ զԱյն քան մենք: Այս պատճառաւ կը յարգեմ զանոնք: Կը սիրեմ զանոնք, վասնզի Տէր Յիսուս զանոնք բարձր նըպատակի մը համար դրած է իր ստեղծագործութեան մէջ: Ամէն մէկը Յիսուսի համար իր մեծ արժէքն ունի, քանզի Նա անոր համար ալ մեռաւ եւ զայն ալ կ'անչեց իրեն վկայ մը ըլլալու չար աշխարհի առջեւ:

Երանի՛ այն կոյրերուն, որոնք Քրիստոսի վկաներն են: Յ. Ն. Ղ.

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

(12—15 տարեկան պատանեաց համար)

- 1—Ի՞նչ է Աստուծոյ բերնէն ելած առաջին հարցումը:
- 2—Ի՞նչ է Նոր Կտակարանի առաջին հարցումը:
- 3—Ի՞նչ է Նոր Կտակարանի վերջին հարցումը:
- 4—Ո՞րն է Ս. Գիրքին առաջին աղօթքը:
- 5—Ո՞րն է Ս. Գիրքին վերջին աղօթքը:
- 6— Ո՞րն է Ադամի վերջին խօսքը:
- 7—Ո՞րն է Աբրահամի առաջին խօսքը:
- 8—Ո՞րն է Աբրահամի վերջին խօսքը:
- 9—Ո՞րն է Իսահակի առաջին խօսքը:
- 10—Ո՞րն է Իսահակի վերջին խօսքը:
- 11—Ո՞րն է Յակոբի առաջին խօսքը:
- 12—Ո՞րն է Յակոբի վերջին խօսքը:

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԻՐՔ ՅՈՒՍԵ (Our Hope էն).— Աստուածաշունչի այս վսեմ գիրքն ալ (Յորայ), իր կարգին քննադատութեան առարկայ եղած է քանզի քննադատներու կողմէ: Անոնք զրեթէ բոլորն ալ կ'սերանան Յորի գոյութիւնը եւ անոր պատմութիւնը իբր այլաբանութիւն կ'ընդունին: Գիրքը շարադրուած է, կը յայտարարեն անոնք, հաւանաբար Բաբելոնեան գերութենէն անմիջապէս վերջ: սւրիչներ կը պնդեն թէ 100 տարի աւելի առաջ գրուած է ան: Այս շահագրտական տեսակէտները, սակայն վերջերս զօրաւոր հարուած մը ընդունած են: Ֆրանսուա Մարթէն, ֆը-

րանսացի անուանի հնագէտ մը, խուճալ Ազիաթիզի մէջ կը գրէ թէ Բեւեռագիր արձանագրութիւններ կրող երեք պնակիտներ գտնուած են, Համմուրաբի թագաւորին ժամանակէն մընացած, այսինքն Ն. Ք. 2200էն: Այս պնակիտները կը պատմեն պատմութիւնը մարդու մը, որ զրեթէ Աստուածաշունչի բառերով, «աստուածներէն կը վախնար ու չարութենէ ետ կը քաշուէր»: Բայց եւ այնպէս ան չար ոգիի մը կողմէ տանջանքներու մատնուեցաւ. այն աստիճան որ մոխիրներու մէջ կը պառկէր, մերկ ու վերքերով ծածկուած: Երբ անոր հաւատքը փորձուեցաւ, իր առողջութիւնն ու հարստութիւնը վերստացաւ Մարտուք աստուածին կողմէ:

Երկու պատմութիւններուն նմանութիւնը շահակալից է, Բայց Պր. Մարթէն կը հաւատայ որ իր գիտը, թէեւ շատ հին, սկզբնական յղացումը չէ դեռ: Եթէ իր այս կարծիքը իրական է, Յորայ գիրքը զրեթէ ամենահինն է մարդկութեան պատմութեան մէջ:

Անտարակոյս այդ է իրականութիւնը, եւ հրէաներ թէ քրիստոնեաներ այդպէս հաւատացած են անցեալին մէջ: Այս գիտն ալ կուզայ աւելնալու այն շարք մը գիտերուն վրայ, որոնք վերջերս իրարու փոխել լռութեան կը դատապարտեն «գիտուն» քննադատներուն անհաւատ առարկութիւնները: Բայց այդ մարդիկը դասերնին չեն առներ եւ կը շարունակեն յարձակիլ Աստուծոյ Սուրբ Խօսքին վրայ:

ԿԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՍՈՎԻԵՏԻՍՏԻՆԻ ՄԷՋ (Our Hope էն).— Ռուսիոյ մեծ հերոսը սարսափեալի Լենինն է: Ամբողջ Ռուսիոյ մէջ կը պաշտուի ան: Հին ատեն ռուսերը «իգոն»ներ ունէին իրենց տուններուն մէջ, սուրբերու պատկերներ, որոնց կ'երկրպագէին: Անոնց տեղը այժմ անաստուած Լենինի պատկերը զբաւած է:

Եւ հիմա աշխարհիս մեծագոյն արձանը, Լենինի մէկ հսկայական պատկերը, պիտի տեղաւորուի նոր կառուցուելիք Սովիէթներու աւաւտին վրայ, որ նախկին Ս. Փրկիչ Մայր եկեղեցւոյն տեղը պիտի բարձրանայ: Ըստ պաշտօնական յայտարարութեան, արձանը պիտի ունենայ 164-246 ոտք բարձրութիւն:

Ասիկա կը յիշեցնէ այն պատկերը զոր մեղաց մարդը պիտի շինէ՝ ինքզինքը պաշտել տալու համար: Յայտ. ԺԳ.

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St Savournin - Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖԲԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարահայտի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

Ս ԱՐՍԷՅԻ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղազարուհան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30ին կիրակնօրեայ դպրոց
մանկանց 11 Rue de l'Eclipse

Շարահայտի ժողովներ Սէն Լուի, Կարաանի,
Սէն ժիւլիէնի, Սէնթ Անթուանի, Սէնթ Մարկրի-
թի, Սէն ժէրմի Պուլվար Օտօի (մէջ):

Սէն Լուի.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. գրական ուսումնա.
16 ին քարոզածողով:

Սէնթ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՈԹԱ.— Քարոզիչ' Պրն. Ս. Պագգալեան,
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15 ին քարոզածողով,
Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տալը:

ՐՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

Սէն Փիէր.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՈՆՏԷՆԻՍԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց:
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ' Բրօի. Գ. Գ. Խաչիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՐՆ.— Հովիւ' Պատ. Ի. Պարսումեան,
18 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(16 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ—Քարոզիչ Պրն. Ի. Աքրահանեան
2. Place de la Pareille.

Կիր ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

ՐԱՐԻՋ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^e
Metro Reaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30ին
37 Rue Tournesfort Paris 5^e
Metro Mouhe Aut. K6

Ամառն Ա. կիրակիները երիտասարդա-
Քրիստոնէական Միութիւն

բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:
Ամառն Գ. կիրակիները երիտասարդա-

դուհեաց Քրիստոնէական Միութիւն
բանախօսութիւնք եւ ուսումնասիրութիւնք:

Ամառն Բ. եւ Գ. կիրակիները Սբ. Գրոց
մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր, ժամը 20. 30ին աղօթածողով
50 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux.

ԱԼՖՕՐՎԻԼ.— Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville

ժամը 4ին կիր. դաս

ԵՐԳ ՄԸ ՁԱՅՆԱԳՐՈՒՄԾ

«ԲԱՆՔԵՐ»Ի ԱՄԷՆ ՄԷԿ ԹԻԻԻՆ ՄԷՋ

«Բանքեր»ի 1933 տարուան վերջին թիւին մէջ գրեցինք թէ կը փափաքինք յառաջիկայ տարին Յունվարի թիւէն սկսեալ (եթէ կարելի ըլլայ) ամէն մէկ թիւի մէջ մէյմէկ ձայնագրեալ հոգեւոր երգ զնել մանկանց սիւնակին տակ:

Գրեցինք նաեւ թէ «Բանքեր» չունի նօթայի թիփեր, բայց կրնայ 1500 ֆրանքի գումարով մը այդ անհրաժեշտ պէտքը լեցնել:

Դեռ, որայդգումարը մինչեւ այսօր եկած չէ. «Բանքեր»ի այս թիւը առանց երգի լոյս կը տեսնէ: Այսու ամենայնիւ բարոյապէս ու նաեւ նիւթապէս քաջալերող նամակներ ընդունած ենք, մեր քով գտնուած գումարը 230 ֆրանքի կը հասնի: Կ'ակնկալենք որ 1300 ֆրանքը շուտով գտնուի եւ մանկանց համար մեր ունեցած փափաքը իրականանայ:

Ա՛րդ, եթէ անհատներ՝ կամ եկեղեցիներ նաեւ կիր. դպրոցներ համախմբուելով շուտով լեցնէին այս գումարը, մենք եւս նոյնքան շուտ պիտի կարենայինք հրատարակել երգերը:

Ուստի Բանքերի այս առաջին թիւը առնելուդ, սիրելի ընթերցող, հաճէ մտածել թէ այս մասին պարտականութիւն մը կ'զգա՞ս. եթէ այո, հաճէ չուշացնել:

Ընդունէ մեր սրտագին շնորհակալութիւնները սիրելի մանուկներու կողմէն

ԽՄԲ. ԲԱՆՔԵՐ»Ի

ՄԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ

ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Միացեալ Նահանգի մեր բաժանորդները անցեալի բարի սովորութեան նման մեզի դարձեալ մէկ տուար կը զրկեն նամակաւ, կամ փօսթով 80 սէնթ: Այս վերջինս մինչեւ մեզի հասնիլը նախկին 30 սէնթին տեղը կը բռնէ: Այս պատճառաւ պիտի խնդրէինք որ փօստով զրկել ուզողներ Ֆրանս. 20 ֆրանքի փոխարէնը վճարեն (հայերէն ու թուրքերէն միասին 27 ֆրանք) եւ կամ եթէ տուար մը կը զնեն իրենց նամակին մէջ, թող հաճին 40 սէնթի ալ ամբիկեան զրօշմաթուղթ զրկել. ապա թէ ոչ այս տարի ալ կըրկին զժողարութեան պիտի մատնուինք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Rédaction du "PANPÈRE"

7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & Cie

39, Rue St.-Savournin - MARSEILLE